

ՄԱՐԶԻԿ

հսլս

Մարզիկ

ՄճԼԵ ԴՅԱՅԻՔԵ ՏԻԻՐԵ
ԿՍԾՐԻՔԱ ԴՄԵԿԵ ԼԻՄԵՆԿՆԵ ԲԵՐՈՒԿ

marzig

SPORTS MAGAZINE

ԻՐՑՈՒՄԻՔ, 2010, ԹԻՒ 3 (333) - VOL. XXIX N° 3 ԼՍԾՈՒՄԻՔ - ԼՍԾՈՒՄԻՔ ԼՍԾՈՒՄԻՔ



Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԻՋԻՆ ԱՐԵԻԵԼԲԻ ՄԻՋ-ՎԱՐՉԱԿԱՆ
ԳԻԻԱՆՆԵՐՈՒԻ Բ. ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎ - ԼԻԲԱՆԱՆ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄԻ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐ - Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

ՀԱՄԱ-Յ.Ս.Ը.Ս.ԱԿԱՆ ԳՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԸ ԱՅՍ ԱՄԱՌ՝ ԲԻՐԱԿԱՆԻ ՄԷՋ



Համա-Յ.Ս.Ը.Ս.ական բանակումներու շարքին իններորդը այս ամառ, 31 Յուլիսին 8 Օգոստոս, տեղի պիտի ունենայ Բիւրականի Յ.Ս.Ը.Ս.-Յ.Ա.Ս.Կ.ի բանակավայրին մէջ, Հայաստան, մասնակցութեամբ շուրջ 500 սկաուտներու, որոնք Յ.Ս.Ը.Ս.ի դրօշին տակ պիտի ծանօթանան իրենց մայր հայրենիքին եւ ազգային դաստիարակութեան մեծ աւիշ ստանալով պիտի վերադառնան իրենց շրջանները՝ նոր թափով ու կորովով շարունակելու համար իրենց աշխատանքները:

Համա-Յ.Ս.Ը.Ս.ական բանակումները արդէն ունին 32 տարուան պատմութիւն: Առաջին չորս բանակումները կատարուած են Հայաստանէն դուրս՝ Յունաստանի (1978, 1990), Ֆրանսայի (1980) եւ Անգլիոյ մէջ (1986): Հայաստանի անկախացումէն ետք, սակայն, անոնք կանոնաւորաբար տեղի կ'ունենան Հայաստանի մէջ (1994՝ Բիւրական, 1998՝ Աղաւնաձոր, 2002 եւ 2006՝ Յ.Ս.Ը.Ս.-Յ.Ա.Ս.Կ.ի բանակավայր՝ Բիւրական):

Ինչպէս նախորդ բանակումները, համա-Յ.Ս.Ը.Ս.ական այս բանակումը եւս ունի իր նշանաբանը («Գործենք միասնաբար»), խորհրդանշանը եւ քայլերգը (խօսք եւ երաժշտութիւն՝ եղբ. Արիկ Գեորգեանի): Բանակումի ընդհանուր խմբապետն է եղբ. Օշին Փիրումեան (Յ.Ս.Ը.Ս.-Յ.Ա.Ս.Կ.): Փոխ խմբապետներն են եղբայր Էմիլ Գեորգեան (Արեւմտեան Մ. Նահանգներ) եւ քոյր Թալին Օրտոդլեան (Լիբանան): Գործադիր խմբապետական կազմին մաս կը կազմեն քոյր Սեդա Պէշլեան (Լիբանան), եղբայրներ Զարեհ Մովսէսեան (Արեւմտեան Մ. Նահանգներ), Մանուկ Քէօշկերեան (Սուրիա), Ռոմանոս Պետրոսեան, Լիլիթ Զաքարեան եւ Վարդան Միրումեան (Յ.Ս.Ը.Ս.-Յ.Ա.Ս.Կ.):

Բանակումին իրենց մասնակցութիւնը կը բերեն Թեհրանի Յ.Ս.Ա.Կ.ի, «Նայիրի» եւ «Սիփան» միութիւններու սկաուտները: Ընդհանուր յայտագիրը արդէն իսկ մշակուած է եւ կ'ընդգրկէ սկաուտական աշխատանքներ եւ հայրենիքի տեսարժան վայրերու այցելութիւններ:

Բանակավայրը օժտուած է համացանցի եւ բջիջային հեռաձայնի օգտագործման յարմարութիւններով: Նախատեսուած է կազմակերպել «Սկաուտի Օր», որուն ընթացքին մասնակից շրջանները ներկայացնող պատուիրակութիւնները պիտի կատարեն շարք մը մրցումներ՝ ձեռային աշխատանքով մարտակառքերու կառուցում, հաղորդակցութեան միջոցներու, քարտիսագրութեան, թէյի պատրաստութեան, փրկարար խըմբակի մրցումներ եւ այլն:

Յայտագրին մէջ նկատի առնուած է նաեւ ռալի մը եւ արշաւ մը դէպի Ամբերդ: Զարգացման մրցումը եւ տաղաւարներով երկիրներու ներկայացումը, անկասկած, մեծ հետաքրքրութիւն պիտի ստեղծեն բանակողներուն մօտ:

Շրջապտոյտներու համար նկատի առնուած են հայրենիքի պատմական վայրերը՝ Սեւանայ լիճ, Գառնի-Գեղարդ, Օշական-Մուղնի-Սաղմոսավանք, Հաղբատ-Սանահին, Խոր Վիրապ-Նորավանք, Ծաղկաձոր: Բնականաբար, նախատեսուած են նաեւ այցելութիւններ՝ Երեւան-Ծիծեռնակաբերդ եւ Էջմիածին-Սարդարապատ:

Յայտագրին մէջ նկատի առնուած է նաեւ ռալի մը եւ արշաւ մը դէպի Ամբերդ: Զարգացման մրցումը եւ տաղաւարներով երկիրներու ներկայացումը, անկասկած, մեծ հետաքրքրութիւն պիտի ստեղծեն բանակողներուն մօտ:

Շրջապտոյտներու համար նկատի առնուած են հայրենիքի պատմական վայրերը՝ Սեւանայ լիճ, Գառնի-Գեղարդ, Օշական-Մուղնի-Սաղմոսավանք, Հաղբատ-Սանահին, Խոր Վիրապ-Նորավանք, Ծաղկաձոր: Բնականաբար, նախատեսուած են նաեւ այցելութիւններ՝ Երեւան-Ծիծեռնակաբերդ եւ Էջմիածին-Սարդարապատ:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՌԱԿՈՂՍ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ Յ.Ս.Ա.Կ.Ի ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԵՒ Յ.Ս.Ը.Ս.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՆՆԵՐՈՒ

Երեքշաբթի, 30 Մարտ 2010ի երեկոյեան ժամը 6ին, Համազգայինի Կեդրոնական Վարչութեան գրասենեակին մէջ տեղի ունեցաւ եռակողմ հանդիպում՝ Իրանի Հայ Մշակութային Արարատ Կազմակերպութեան (Յ.Ս.Ա.Կ.), Համազգայինի Կրթական եւ Մշակութային Միութեան եւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան (Յ.Ս.Ը.Ս.) Կեդրոնական Վարչութիւններուն միջեւ:

Հանդիպումին ընթացքին արծարծուեցան հայկական երեք միութիւններուն միջեւ համատեղ գործակցութեան նոր հորիզոններ բանալու կարելիութիւնները, համազգայութային մակարդակով մարզական եւ մշակութային ծրագիրներ իրականացնելու հնարաւորութիւնները, ինչպէս նաեւ՝ գաղութներու միջեւ ճանաչողական, ընկերային եւ աշխատանքային յարաբերութիւններն ու գործակցութեան ոգին նորոգ թափով ամրապնդելու կարելի բոլոր միջոցները:





ԹԻՒԻՆ ՆԻՒԹԵՐՂ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مجلّة رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي مارزیک



Մարզական ամսաթերթ
 Հրատարակություն՝ Հ.Ս.Ը.Մ.ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԻԹ. ՏԱՐԻ, 2010, ԹԻՒ 3 (333)

ԽՄԲԱԳԻՐ
 Կիզեն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍ
 Սեդա Պէշլեան, Սեւան Նազարեան

«ՄԱՐՁԻԿ»-Ի ՅԱՆՁՆԱՆՈՒՄԲ
 Պատրիկ Կիւլպէնկեան
 Աբօ Մոսիկեան
 Գօգօ Սկրտիչեան
 Վահան Համամձեան
 Տիրան Շահինեան
 Սալբի Ճէճէեան
 Վահէ Թամաշեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ
 Միհրան Շիմշիրեան, Ներսէս Արք.
 Բախտիկեան*, Գ. Թորոյեան,
 Գառնիկ Սկրտիչեան, Արմէն
 Քօշլէրեան, Սալբի Լատոյեան
 եւ շրջաններու թղթակիցներ:
 Էջադրում - Ջարեհ Չէօրէքձեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողքի Ձեւաւորում՝ Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
 Պուրճ Համուտ, Գինիչեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՏՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատավաճառի սակն է 3000 լ.ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ճշդուած է 35000 լ.ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Ս.Ը.Մ.ի Սեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$50,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):



5

Հ.Ս.Ը.Մ.ԱՎԱՆ ԿԵԱՆՔ

■ Խմբագրական	2
■ Պատգամ	3
■ Կազմակերպական	5
■ Ակնարկ	13
■ Պատմութիւն	16
■ Մասնաձիւղէ Մասնաձիւղ	20
■ Մեր Կորուստները	36

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Սկաուտական Արարա-
 տեան կարգի դասընթաց-
 քին հովանաւորութիւնը
 ստանձնելով, տէր եւ տի-
 կին Ստեփան եւ Թամար
 Տէր Պետրոսեաններ Հ.Ս.-
 Ը.Մ.ի Կեդրոնական Վար-
 չութեան կը նուիրեն 5000
 ամ. տոլար:



10

ԲԱԺԻՆՆԵՐ

■ Միջազգային	18
■ Մանկապատանեկան	38
■ Տարբեր Հայեացքով	40



ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՅՈՒՄԸ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

(Ա.)

Կը հիւանդանան՝ առանց Պլեբ-պըրիի, գլխու պտոյտ կ'ունենան՝ առանց Այ-Ֆոնի եւ անտր-րամադիր կ'ըլլան՝ առանց Լէպ-թոփի:

Թերթերը կը կարդան համացանցէն, կը ցատկոտեն «Ֆէյսպուք»ի եւ «Թուիթթըր»ի միջեւ եւ նորագոյն ֆիլմերուն կը հետեւին «Եութիուպ»էն:

Օրական կը ստանան բազմատասնեակ ե-նամակներ, որոնք կը տեղեկացրնեն, թէ միլիոնաւոր տողարներ շահած են վիճակահանութիւններու, որոնց երբեք չեն մասնակցած: Կամ՝ առաջարկներ կը ստանան այս կամ այն անծանօթէն, որ կը փափաքի ծանօթացման կապ հաստատել իրենց հետ:

Յստակ է, թէ ակնարկութիւնը որո՞ւ մասին է: Համաշխարհայնացած աշխարհի այսօրուան երիտասարդութեան պատկերն է այս, որ ամբողջական ըլլալու համար կը կարօտի նաեւ յաւելեալ նկարագրութեան:

Այ-փոտը այս երիտասարդութեան համար այլեւս պերճանք չէ, այլ՝ ականջին անբաժանելի մէկ մասնիկը: Իսկ Այ-փոտը բոլոր առիթներու սպասուած նուէրն է:

Կ'ապրին կեանք մը, որ կը տարութերի իրականութեան եւ ելեկտրոնային ենթադրեալ աշխարհներու միջեւ: Երկուքը իրարու միախառնուած են այնպէս մը, որ դժուար թէ կարելի ըլլայ զանազանել, թէ ո՞ր կը սկսի մէկը եւ ո՞ր կը վերջանայ միւսը:

Անոնք կ'ապրին կեանք մը՝ հոս, կեանք մըն ալ հոն: Այստեղի կեանքը չ'ամբողջանար առանց այնտեղի կեանքին եւ, անշուշտ, հակառակը:

Անոնք, այս երիտասարդները, իրենց գործերը կը կատարեն հոս, հոն, վայրերու մէջ, որոնք անպայման աշխատավայրեր չեն, սակայն դարձած են աշխատավայրերը փոխարինող տեղեր:

Սիրելիներն ու ծանօթները այս երիտասարդներուն համար գոյութիւն ունին հո՞ն, ելեկտրոնային այդ աշխարհին մէջ, ուր օրական կը գրուցեն իրարու հետ, այնպէս մը որ ոչ մէկը ինքզինք հեռու կը ըզզայ ուրիշէն, բայց նաեւ՝ ոչ ոք կ'ապրի իրարու մօտ ըլլալու հարազատութիւնը:

Տակաւին, այս երիտասարդները ունին բազմաառիւր բարեկամներ, որոնց հետ օրական կը բաժնեկցին իրենց ամէնէն անձնական ու ջերմ նկարները, առանց սակայն կեանքի մէջ գէթ մէկ անգամ անոնց հետ հանդիպելու:

Այսպէս, ահա, համաշխարհայնացումի շնորհիւ կամ պատճառով, մեր շուրջ ստեղծուած է կեանք մը, ուր ստեղծագործ խառնուրդ մը կայ մօտի եւ հեռուի, իրական եւ ենթադրեալ աշխարհներու:

Տարբեր է այս կեանքը: Բնականաբար, տարբեր են նաեւ այս կեանքին համն ու հոտը հանդիսացող այսօրուան երիտասարդները: Եւ տարբերութիւնը անպատճառ ժխտական իմաստով պէտք չէ առնել:

Ժամանակին, երիտասարդութեան դաստիարակութեան նուիրուած խորհրդրդաժողովի մը ընթացքին, զեկուցող մը իր խօսքին մէջ կը կատարէ մէջբերումներ, թէ՛ «Այսօրուան երիտասարդութիւնը բնաւ ստեղծագործ չէ, միայն սպառող է, աւելի՛ն՝ ոչ միայն սպառող է, այլեւ՝ ոչընչացնող է»: Կամ՝ «Ներկայ սերունդը բացարձակապէս յարգանք չունի մեծերուն հանդէպ, եւ եթէ մեծերը ուզեն կրթել-դաստիարակել զանոնք, անոնք չեն ենթարկուիր»: Եւ կամ՝ «Եթէ այսպէս շարունակուի, քաղաքակրթութիւնը չի զարգանար, նահանջ կ'ապրի եւ այս սերունդը վերջինը կ'ըլլայ»: Խորհրդաժողովին ներկաները բուռն ծափահարութիւններով կ'ընդմիջեն զեկուցողը, որ սակայն կը խնդրէ վայրկեան մը լռութիւն՝ անմիջապէս աւելցնելու համար, որ «Մեր կատարած մէջբերումները ըսուած են 1000 տարի առաջ, այսինչ տեղը, կամ 2000 տարի առաջ, Եգիպտոսի մէջ փորագրուած քարերու վրայ... Բայց եւ այնպէս, ինչպէս կը տեսնէք կեանքը շարունակուած է, քաղաքակրթութիւնը յառաջդիմած է»:

Արդ, երբ այսօր խօսք կ'ըլլայ համաշխարհայնացումի եւ երիտասարդութեան մասին, մեր կարգին, անհանգստութեան չենք մատնուիր, այլ՝ կը հաստատենք, որ ի՞նչ ալ ըլլան մեր շուրջի պայմանները, կեանքը պիտի շարունակուի եւ քաղաքակրթութիւնը պիտի զարգանայ իրեն յատուկ կշռոյթով:

Հ.Մ.Ը.Մ.Ը ԴՊՐՈ՛Ց Է, ՈՒՐ ՄԵՆՔ ԿԸ ԱՏԱՆԱՆՔ ԳԻՏԱԿՑԱԿԱՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ

(Մեծի ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՍԻՆ ՊԱՏԳԱՄԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԴԻՒԱՆՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ, ԱՆԹԻԼԻԱՍԻ ՎԵՀԱՐԱՆԻՆ ՄԷՋ, 7 ՄԱՐՏ 2010ԻՆ)

Այս Տունը մեր ժողովուրդին տունն է եւ մեր ժողովուրդին զաւակները այս Տան հանդէպ միշտ պարտաւորութիւն եւ իրաւունք ունին:

Երկրորդ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը միայն վայր մը չէ, կառոյց մը չէ, հաստատութիւն մը չէ, այլ՝ առաքելութիւն մըն է եւ այդ առաքելութեան նպատակը ծառայութիւն է մեր ժողովուրդին, այլ խօսքով՝ Անթիլիասը պատերէն անդին ինքզինք կը դառնայ, իր ծառայութիւնը կ'արժեւորէ մեր ժողովուրդի կեանքէն ներս:

Երրորդ, Անթիլիասի ծառայութիւնը միայն հոգեւոր շրջագիծի մէջ պէտք չէ տեսնել: Փաստօրէն, մեր Աթոռին ծառայութիւնը եղած է համապարփակ, այլ խօսքով՝ մեր ազգը իր կեանքի բոլոր տարածքներով, բոլոր բնագաւառներով, առաւել կամ նուազ չափով, ներկայութիւն եղած է, է՛ եւ պէ՛տք է ըլլայ մեր Աթոռին ծառայութեան մէջ:

Երբ նայիք գաղութներէն ներս մեր Աթոռին ներկայութեան, ծառայութեան, պիտի տեսնէք, որ հոն բացակայ բան չկայ, ինչ որ մեր ժողովուրդին կապուած է՝ հոգեւորէն սկսեալ մինչեւ ազգայինը, մարզականէն սկսեալ մինչեւ Հայ Դատը, ընկերայինէն սկսեալ մինչեւ կրթականը: Այլ խօսքով, ինչ որ մեր ժողովուրդի կեանքին առնչուած է, մաս կը կազմէ նաեւ մեր Աթոռին առաքելութեան:

Ահաւասիկ, երեք կէտեր յիշեցուցի, եւ ես կ'ուզեմ, որ մեր Աթոռին կեանքն ու առաքելութիւնը մենք այս հայեցակէտով դիտենք: Այս ծիրէն ներս Հ.Մ.Ը.Մ.ը կարեւոր ներկայութիւն եղած է մեր Աթոռին ծառայութեան մէջ: Մենք միշտ գնահատող եղած ենք Հ.Մ.Ը.Մ.ը, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ տեսած ենք ազգին ծառայելու հաւատքը, կամքը ու յանձնառութիւնը: Որեւէ կառոյց, որ ազգին կը ծառայէ, մեր Աթոռին համար սիրելի է: Կառոյցը ինքնաբաւ, ինքնակեդրոն չի կրնար ըլլալ: Որեւէ կառոյց մեր ժողովուրդի կեանքէն ներս յարգանքի, սիրոյ արժանի կը դառնայ, երբ կը ծառայէ մեր ժողովուրդին, եւ Հ.Մ.Ը.Մ.ը այդպէս եղած է: Հ.Մ.Ը.Մ.ը մեր ժողովուրդին ծառայութեան լծուած է, Հ.Մ.Ը.Մ.ը մեր նոր սերունդները կերտած է բարոյական, նաեւ հոգեւոր, մանա-



ւանդ ազգային արժէքներով: Հետեւաբար, Հ.Մ.Ը.Մ.ը դպրոց մը եղած է, ուր մեր նոր սերունդները կրթուած են մեր ազգին ոգիով, մեր ազգին արժէքներով, մեր ազգին աւանդութիւններով: Այլ խօսքով, հայեցի կրթութեան, կրօնական դաստիարակութեան նուիրուած կառոյց մը եղած է Հ.Մ.Ը.Մ.՝ եկեղեցւոյ, դպրոցի եւ այլ կառոյցներու կողքին:

Ինծի համար կարեւոր չէ, որ Հ.Մ.Ը.Մ.ի Ֆութպոլը կը պարտուի, Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլը կը պարտուի, փինկփոնկը կը պարտուի, Հ.Մ.Ը.Մ.ը ընդհանրապէս մարզական խաղերու մէջ կը պարտուի: Մեր ժողովուրդը այս չի սպասեր Հ.Մ.Ը.Մ.էն: Մեր ժողովուրդը Հ.Մ.Ը.Մ.էն կը սպասէ, որ աշակերտները, մեր մանուկները, պատանիները հայեցի ու քրիստոնէական դաստիարակութիւն ստանան Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով: Մեր ժողովուրդը կը սպասէ, որ գիտակից հայեր դառնան իր զաւակները՝ Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով: Այս կը սպասենք մենք: Հ.Մ.Ը.Մ.ը միայն մարմնակրթական միութիւն չէ, Հ.Մ.Ը.Մ.ը դպրոց է, ուր մենք կը ստանանք գիտակցական հայութիւն, այն արժէքները, այն ոգին, այն աւանդութիւնները, այն ձգտումները եւ երազները, որոնք մեր մէջ ազգային մեր նկարագիրը կը կազմաւորեն, մեր հայութիւնը կը կերտեն: Այս է Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը: Այսպէս եղած է եւ ես կ'ուզեմ որ դուք շեշտը դնէք ասոր վրայ:

Ֆութպոլն ալ կարեւոր է, մարզանքն ալ կարեւոր է, փինկ-

փոնկն ալ կարեւոր է, պաւքեթպոլն ալ կարեւոր է, սակայն երկրորդական են: Մեզի համար հիմնականը, մանաւանդ Սփիւռքի մէջ, հայութիւնը պահելու իմաստով, մեր նոր սերունդներուն մէջ ազգային նկարագիրը կերտելու իմաստով, Հ.Մ.Ը.Մ-ը կարեւոր դերակատարութիւն ունի, ունեցած է եւ ունի՝ այսօր:


Սփիւռքի մէջ հայ ըլլալը, հայ մնալը մանաւանդ մարտահրաւէր մըն է, մեծ զոհողութիւն մըն է, եւ այդ մարտահրաւէրին դիմաց մենք հսկայ զոհողութեամբ որոշած ենք հայ մնալ: Սփիւռքի մէջ հայ մնալը որոշումի հարց է, որովհետեւ մեր կեանքի ճամբաները լարծուն են, սակայն մենք որոշած ենք հայ մնալ եկեղեցւոյ ճամբով, դպրոցի ճամբով, մեր միութիւններու ճամբով, մեր հաւաքական կամքով որոշած ենք հայ մնալ: Այսօր, մեր դիմաց կանգնող մարտահրաւէրներուն եւ անոնց դիմաց մեր հաւաքական պայքարի ծիրէն ներս, Հ.Մ.Ը.Մ-ը կարեւոր տեղ ու վճռական դեր ունին կատարելիք: Ես կ'ուզեմ որ Հ.Մ.Ը.Մ-ի պատասխանատուները, դո՛ւք մանաւանդ, այս հայեցակէտով դիտէք, արժեւորէք եւ ծրագրէք Հ.Մ.Ը.Մ-ի աշխատանքները:

Այսօր, դուք ինձմէ լաւ գիտէք, որ մարզական աշխարհէն ներս այնքան յառաջդիմութիւններ կան, տարբեր մօտեցումներ կան, նիւթական հսկայական ներդրումներ կան ամէն տեղ, այդ բոլորին դիմաց Հ.Մ.Ը.Մ-ը ոչինչ կրնայ ընել: Մենք պէտք չէ մրցինք մեր շրջապատին հետ: Հ.Մ.Ը.Մ-ի կոչումը այդ չէ: Հ.Մ.Ը.Մ-ի կոչումը մեր նոր սերունդը մեր արդի

կեանքին մէջ պահելն է, եւ մեր ազգային արժէքները փոխանցել է մեր նոր սերունդին՝ մարզական, ընկերային եւ այլ միջոցներով: Այսպէս եղած է Հ.Մ.Ը.Մ-ի դերը անցեալին, եւ ես կը սպասեմ որ միշտ այսպէս մնայ Հ.Մ.Ը.Մ-ը, Հ.Մ.Ը.Մ-ի իւրապատուկ առաքելութիւնը մեր ժողովուրդի կեանքէն ներս:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը միշտ զօրավիգ կանգնած է Հ.Մ.Ը.Մ-ին, դնահատողը եղած է Հ.Մ.Ը.Մ-ի ծառայութեան, եւ մենք կը մնանք այդպէս: Ուր որ Հ.Մ.Ը.Մ-ը ներկայութիւն է, այդ ներկայութիւնը ես շատ լաւ կը ճանչնամ, ծառայական ներկայութիւն է, մեր ազգի կեանքէն ներս աշխուժութիւն յառաջացնող ներկայութիւն է, եւ մեր ժողովուրդին կապուած է որեւէ կառոյցէ աւելի: Հ.Մ.Ը.Մ-ի շուրջ մեր ժողովուրդը համախմբուած է, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ-ը կը սիրէ: Այնպէս ըրէք, որ աւելիով ձեզ սիրեն: Այնպէս ըրէք, որ աւելիով ձեզ յարգեն: Այնպէս ըրէք, որ աւելիով ձեր շուրջը ժողովուրդ ըլլայ:

Ես կ'ուզեմ, որ Հ.Մ.Ը.Մ-ը իր կենսունակ ներկայութեամբ, իր ծառայական ներկայութեամբ, մեր ժողովուրդի զաւակները իր շուրջ համախմբէ, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ-ը մեզի համար հայութիւն բուրոյ, հայութիւն տարածող, հայութիւն ներշնչող առաքելութիւն մը եղած է եւ կը մնայ: Հետեւաբար, անգամ մը եւս կ'ողջունեմ ձեր ներկայութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի մայրավանքէն ներս եւ ձեր բոլորին կը մաղթեմ ամբողջական յաջողութիւն ձեր առաքելութեան ճամբուն վրայ:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Reservations Yerevan
 32-38, Hanrabedoutian Street,
 Yerevan 375010, Armenia
 Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
 sales@europelhotel.am

Studio/ICEVI 2005/PAES



Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻՋ-ԴԻՒՆԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

ՀՄԸՄԻ կազմակերպական կեանքի վերջին տարիներու ուշագրաւ նորութիւններէն է Միջին Արեւելքի վարչութիւններու խորհրդաժողովը, որ տեղի կ'ունենայ չորս տարին անգամ մը, նպատակ ունենալով քննել միութեան Միջին Արեւելքի 23 մասնաճիւղերը յուզող հարցերը, փորձելով հասարակ յայտարար մը գտնել անոնց դժուարութիւններուն լուծման ճիգերուն եւ ապագայի բարեկաման ծրագիրներուն:

Ամմանի առաջին խորհրդաժողովէն ետք (Սեպտեմբեր 2006), այս խորհրդաժողովներու շարքին երկրորդը տեղի ունեցաւ անցնող Մարտին, Անթիլիասի մէջ, Լիբանան, նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան եւ կազմակերպութեամբ՝ Կեդրոնական Վարչութեան կազմակերպական յանձնախումբին: Երկօրեայ Խորհրդաժողովին իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Գրիգորիս Պողարեան, Կարպիս Գապասագալեան, Միհրան Շիմշիրեան (Լիբանան) եւ Յարութիւն Յարութիւնեան (Հայաստան): Կազմակերպական յանձնախումբը ներկայացուցին եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան եւ Արա Յակոբեան: Ներկայ եղանակէն Հ.Մ.Ը.Մ.Ի պատմութեան գիրքերու հրատարակութեան պատասխանատու եղբ. Բիւզանդ Թորիկեան, «Մարզիկ» պաշտօնաթերթի մօտ Կեդրոնական Վարչութեան լրագոր ներկայացուցիչ եղբ. Պատրիկ Կիւլպէնկեան, «Մարզիկ» խմբագիր եղբ. Վիգէն Աւագեան եւ Կեդրոնական Վարչութեան գործավար քոյր Վերա Բարսեղեան-Տէր Պողոսեան:

Մարտի յետմիջօրէի ժամը 5ին, Անթիլիասի «Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզահամալիրի «Հրայր Մարուխեան ժողովարահ»-ին մէջ, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի, Սուրիոյ, Քուէյթի, Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ շրջաններէն 36 քոյր-եղբայրներու, Շրջանային թէ՛ Մեկուսի Վարչութիւններու եւ մասնաճիւղերու ղեկաններու անդամներ:

Բացման խօսքով ներկաները ողջունեց Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան: Ան իր խօսքին մէջ շեշտը դրաւ Հ.Մ.Ը.Մ.Ի ազգապահպանման եւ ազգակերտման առաքելութեան վրայ՝ դպրոցին, եկեղեցւոյ եւ լրատուամիջոցներու կողքին: Ան յայտնեց, որ վերոյիշեալ երեք կառույցները տարբեր ձեւերով մուտք կը գործեն հայկական տուններ, սակայն պարագան նոյնը չէ՝ ակումբին, ուր հայորդիները հրաւիրելու համար պէտք է հետեւողական յատուկ աշխատանք տանել:

Շարունակելով, եղբայր Պողարեան նշեց, որ այսօր Հ.Մ.Ը.Մ.Ի դիմագրաւած հիմնական մարտահրաւէրներէն մէկն է նոր սերունդը ներգրաւելը եւ միութիւնը բոլորին գրաւիչ դարձնելը: Ան ըսաւ, որ նման խորհրդաժողովներով պէտք է սերտել միութեան դէմ սցողած մարտահրաւէրները, լուծումներ գտնել անոնց եւ հաստատել, թէ՛ Հ.Մ.Ը.Մ.Ը կը վերցնէ նետուած ձեռնոցը:

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան բացման խօսքին յաջորդեց գեկուցումներու օրակարգը: Քոյր Մարո Թագեան, եղբայրներ Բաֆֆի Տէր Աբրահամեան եւ Յակոբ Յովակիմեան ներկայացուցին Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի, Սուրիոյ եւ Քուէյթի շրջաններու երկամեայ գործունէութեան տեղեկագիրները, որոնց շուրջ լուսաբանական հարցումները եւ պատասխանները երկարեցան մինչեւ երեկոյեան ժամը 6:30:

Ապա, մէկ ժամուան դադարէ ետք, խորհրդաժողովը

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ԲԱՅՈՒՄԸ ԵՒ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՐՈՒ ՆՈՍՏԵՐԸ
 Խորհրդաժողովը իր աշխատանքներուն սկսաւ Ուրբաթ, 5



Զախեն աջ՝ Գ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Գրիգորիս Պողարեան, Միհրան Շիմշիրեան, Կարպիս Գապասազալեան եւ Յարութ Յարութիւնեան:

վերսկսաւ իր աշխատանքներուն եւ երկրորդ նիստով լսեց եղբայրներ Վարդան Գազանճեանի եւ Վահէ Պէնօհանեանի տեղեկագիրները՝ Հ.Մ.Ը.Մ.ի Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ շրջաններուն մասին: Օրակարգի աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենադպիր եղբայր Կարպիս Գապասազալեան ներկայացուց Զրդ Պատգամաւորական Ժողովէն ընտրուած Կեդրոնական Վարչութեան 30 ամսուան գործունէութեան համառօտ տեղեկագիրը եւ պատասխանեց այս ուղղութեամբ եղած լուսաբանական հարցումներուն:

Նիստին փակումէն առաջ, ելոյթ ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ, միութեան պատմութեան գիրքերու հրատարակութեան պատասխանատու եղբայր Բիւզանդ Թորիկեան: Ան ժողովականներուն գաղափար մը փոխանցեց ցարդ իր հրատարակած Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան չորս հատորներուն մասին եւ յայտնեց, թէ կը ծրագրէ հինգերորդ հատորը յատկացնել վաստակաշատ միութենականներու կենսագրականներուն, «Ո՞վ, ո՞վ է» դրութեամբ:

Նիստը փակուեցաւ երեկոյեան ժամը 9ին, որմէ ետք խորհրդաժողովին մասնակիցները Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի ակումբին մէջ ընթերթի հիւրը եղան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան:

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԸ՝ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՒ ԶՐՈՑՑ-ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Խորհրդաժողովին երկրորդ օրը յատկացուեցաւ վարչական կազմերու ամէնօրեայ մտահոգութիւններուն վերաբերող գեկուցումներու ներկայացման եւ զրոյց-քննարկման:

«Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագիր եղբայր Վիգէն Աւագեան ներկայացուց առաջին նիւթը. «Միջոցներ՝ ներգրաւելու համար մանուկը, պատանին եւ երիտասարդը»: Եղբայրը իր նիւթին սկիզբը հարց տուաւ, թէ ուրկէ՞ պէտք է ներգրաւել այսօրուան նոր սերունդը, ինչո՞ւ անոնք մեր մօտ չեն, մինչեւ հիմա ի՞նչպէս կը գային մեզի եւ գալին ետք ի՞նչպէս կը մնային մեր մօտ: Այս մասին լայն բացատրութիւններ տալէ ետք, եղբայր Աւագեան նշեց, որ այսօրուան սերունդը

կեանքի պայմաններու բերումով, անհատական, ընկերային թէ ազգային նկարագիրով տարբեր է 10-15 տարի առաջուան սերունդէն: Երեւոյթին ախտաճանաչումը կատարելով, օրինակներով եւ վիճակագրական թիւերով ան նշեց 10 պատճառներ, եւ իբրեւ լուծում շեշտեց, որ համաշխարհայնացումի այս օրերուն, նորութիւնը, յաջողութիւնը միայն նիւթական կ'ապահովէ, իսկ նիւթականը՝ նորութիւն, յաջողութիւն: Հարցը երկկողմանի է: Ուրեմն, աւելցուց ան, հարկ է՝

- Պատասխանատուներու տեւական վերաւորակաւորում:
- Ծրագիրներու վերատեսութեան քաջութիւն, պատրաստութիւն եւ տրամադրութիւն:
- Նիւթական յաւելեալ միջոցներ:
- Մենք մեզ այլեւս չբաղդատենք մեր անցեալին հետ, այլ՝ մեր շուրջիներուն հետ:
- Մենք մեր թերիները նշելով յուսահատական կացութիւն չստեղծենք: Բացուինք իրարու, բացուինք մեր շրջապատին, որպէսզի իրարմով զօրանանք:

Եզրակացնելով, եղբայր Աւագեան ըսաւ, որ այսօր զօրաւորները, մեծերը միայն կրնան մարդ ներգրաւել: Մեր միութիւնը այդ հնարաւորութիւնները ընձեռած է: Եթէ առանձին գործ մը չենք կրնար գլուխ հանել: Միասնաբար փորձենք: Բայց փորձենք:



Քոյր Մարո Թագեան



Եղբ. Ռաֆֆի Տր Արսահանեան



Չախեն աջ` Զ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամներ՝ եղբայրներ Գառնիկ Սկրտիչեան, Արա Յակոբեան, Պատրիկ Կիւլպէնկեան եւ «Մարզիկ»ի խմբագիր Վիգէն Աւագեան:

Այնուհետեւ, խորհրդաժողովին երկրորդ նիւթը ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենադպիր եղբայր Կարպիս Գապասագալեան: Եղբայրը ներկայացուց «Միութենական մեր դժուարութիւնները եւ զանոնք հարթելու ձեւերը»: Ան միութենական դժուարութիւնները բաժնեց ութ մասի եւ առանձնաբար խօսեցաւ իւրաքանչիւրին պատճառներուն եւ յաղթահարման ձեւերուն մասին.- անդամական թիւի հարց, հաւաքավայրի դժուարութիւն, ակմբային կեանքի թուլացում, յայտագիրներու (սկստակական թէ մարզական) պատրաստութեան դժուարութիւն, պատասխանատու կազմերու տագնապ, նիւթական մտահոգութիւններ, հետաքրքրութիւններու հարց եւ ներքին թէ արտաքին դժուարութիւններ:

Մեկնելով խորհրդաժողովին առաջին օրը ներկայացուած տեղեկագիրներու մտահոգութիւններէն, եղբայր Գապասագալեան լուսարձակի տակ առաւ շրջաններու դիմադրաւած հիմնական դժուարութիւններու հասարակ յայտարարները եւ անհրաժեշտ թելադրանքներ կատարեց իրարու եւ այլոց փորձառութիւններէն օգտուելու եւ համբերատար, երկարաշունչ եւ ծրագրեալ աշխատանքով արդիւնաւէտ գործունէութիւն ունենալու համար: Եղբոր շահեկան ներկայացումը ունեցաւ հարց-պատասխանի երկար բաժին, որուն համար ան

չարունակուեցաւ նաեւ յետմիջօրէի նիստին:

Յետմիջօրէին, խորհրդաժողովը լսեց երեք գեկուցումներ՝ միութիւնը հետաքրքրող այժմէական նիւթերու շուրջ:

«Մարզիկ» պաշտօնաթերթի մօտ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան լիազօր ներկայացուցիչ եղբայր Պատրիկ Կիւլպէնկեան ներկայացուց թերթին ներկայ վիճակը խմբագրական եւ վարչական իմաստով եւ առաւելաբար կեդրոնացաւ անոր ցրուածի հարցերուն շուրջ: Եղբայր Կիւլպէնկեան շըրջաններուն թելադրեց ունենալ «Մարզիկ»ի մնայուն ներկայացուցիչներ, որոնք զբաղին թերթին նիւթեր, ծանուցումներ եւ բաժանորդներ ապահովելու աշխատանքով:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Միհրան Շիմչիբեան եւ Կարպիս Գապասագալեան խօսեցան անցնող ամիսներուն իրագործուած համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն եւ Վկայեալ կարգի ու խմբապետներու վերադարձուած ցամաքամասային դասընթացներուն մասին: Եղբայր Գապասագալեան արտայայտուեցաւ նաեւ այս ամրան տեղի ունենալիք համա-Հ.Մ.Ը.Մ.ական Յրդ բանակումին եւ Արարատեան կարգի սեմինար-բանակումին մասին: Ներկաները հարցումներու ճամբով ստացան լուսաբանական յաւելեալ տեղեկութիւններ:

Երրորդ գեկուցումը ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հայրենի անդամ եղբ. Յարութիւն Յարութիւնեան: Ան խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի գործունէութեան մասին: Պարզեց շրջանին գլխաւոր աշխատանքները եւ յառաջիկայի հեռանկարները, ապա ան շեշտը դրաւ քոյր մասնաճիւղերու ծրագրին վրայ, ներկայացնելով անոր օգտակարութիւնը՝ միութեան Սփիւռքի թէ Հայաստանի մասնաճիւղերուն համար: Եղբայր Յարութիւնեան անդրադարձաւ նաեւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Յրդ ընդհանուր բանակումին եւ մաղթեց, որ շրջանները լաւ մասնակցութեամբ իրենց ներդրումը կ' ունենան բանակումին յաջողութեան:

Եղբայր Յարութիւն Յարութիւնեանի գեկուցումին յաջորդեց Պէյրութի «Ազդակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր եւ տնօրէն Շահան Գանտահարեանի գեկուցումը՝ Հայաստանի ներկայ իրավիճակին մասին: Գանտահարեան արտայայտուե-





ցաւ հայրենի կեանքը յուզող գլխաւոր հարցերուն մասին եւ իր խօսքին մէջ լայն բաժին մը յատկացուց հայ-թրքական փրոթոքոչներու ստորագրութեան հետեւանքներուն եւ անդրադարձներուն՝ հայկական, շրջանային թէ՛ միջազգային մակարդակներու վրայ:

Այնուհետեւ, խորհրդաժողովին վերջին զեկուցումը ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղ-

բայր Միհրան Շիմշիրեան: Ան խօսեցաւ «Հ.Մ.Ը.Մ.ի դերը անցեալին, այսօր եւ վաղը» նիւթին մասին: Ժամանակագրական վեց հանգրուաններով (Հիմնադրութիւն եւ հայրենիք գործուղում, Պոլիսէն դուրս, Տարածումը եւ ամրապնդումը, Համահայկական կառոյցի վերածումը, Հայաստանի անկախացումը, Հ.Մ.Ը.Մ.ը այսօր) եղբայր Շիմշիրեան պարզեց Հ.Մ.Ը.Մ.ի դերն ու առաքելութիւնը հայ կեանքէն ներս: Իր զեկուցումին աւարտին, ան դիտել տուաւ, որ պէտք է արդի պայմաններու ընծայած կարելիութիւնները ուսումնասիրել եւ մեր նպատակին հասնելու միջոցներու վերածել, որպէսզի ունենանք մասսա մը, որ հետեւի մեզի:

«Պահելով հանդերձ մեր ընդհանրական արժէքները եւ սկզբունքները, պէտք է յարմարիլ տեղական պայմաններուն եւ ըստ այնմ ճկուն գործելաձեւ որդեգրել շրջանէ շրջան: Միաժամանակ, մարզական մասնագիտութիւններու (ֆութպոլ, պասքեթպոլ) դարոցներ պէտք է յառաջացնել՝ ըլլան անոնք անհատական թէ՛ հաւաքական: Սկստական ճիւղին մէջ հարկ է զարգացնել մասնագիտական պէճերու դրութիւնը եւ զանոնք ծառայեցնել աւելի մեր գաղափարական հասկացողութեան եւ ո՛չ թէ ինքնանպատակ ուղղութիւններու», ըսաւ եղբայր Շիմշիրեան (զեկուցումին ամբողջութիւնը տեսնել էջ 13-15):

Եղբայր Շիմշիրեանի զեկուցումէն ետք, խորհրդաժողովը քննեց զանազան հարցերու օրակարգը եւ իր աւարտին հասաւ Շաբաթ, 6 Մարտի երեկոյեան ժամը Ցին:

Խորհրդաժողովի փակումէն ետք, մասնակիցները խանդավառ մթնոլորտի մէջ ընթրիքի հիւրը եղան Պուրճ Համուտի քաղաքապետութեան:



Խորհրդաժողովի մասնակիցները Եղեռնի նահատակաց մատրան առջեւ:

Լուսանկարները՝ «ՖՈՅՕ ԱՇՆԱԿ»ի

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՄԵՆԸ ԼԻՔԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ ՊԱՐԳԵՒԱՏՐԵՑ ՄԻՈՒԹԵԱՆ «ԱՐՏԱԿԱՐԳ» ՊԱՏՈՒԱՆՇԱՆՈՎ

ՀՄԸՄԻ Միջին Արեւելքի վարչութիւններու միջ-դիւանակա՞ն երկրորդ խորհրդա՞ժողովի աշխատանքներու աւարտին, Կիրակի, 7 Մարտի կէսօրին, խորհրդա՞ժողովի մասնակիցները այցելեցին Պէյրութի Ս. Նշան Մայր եկեղեցի եւ Ազգային Առաջնորդարանի դահլիճին մէջ հանդիպում մը ունեցան Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեանի հետ:



Թիւն ներշնչող միութիւն է, ոգեւորող հոսանք է, կազմակերպութեան ու կարգապահութեան ուրոյն օրինակ է», յայտնեց Գեղամ Եպս. Խաչերեան: Ապա ան լուսարձակի տակ առաւ Սիիւռքի հայութեան համար Միջին Արեւելքի երկիրներուն կարեւորութիւնը՝ հայկական միջավայրի ստեղծման եւ ազգային ոգիի պահպանման իմաստով՝ դիտել տալով, որ թէեւ ներկայիս դժուար հանգրուանի ընդառաջ ենք, քաղաքական իմաստով հրաբուխը տակաւին չէ հանգած, սակայն տակաւին կարելի է պահել հայկական հարազատութիւնը, ազգային շունչը: Այս իմաստով, ան Միջին Արեւելքի երկիրները նկատեց ՀՄԸՄԻ կորիզը, ոչնասինը:

Այս առիթով, «ՀՄԸՄԻ նկատմամբ Առաջնորդ Հօր տածած յատուկ ուշադրութեան, հոգատարութեան, անոր աշխատանքներուն նկատմամբ ցուցաբերած քաջալերանքին եւ աջակցութեան համար», ՀՄԸՄԻ Կեդրոնական Վարչութիւնը Գեղամ Եպս. Խաչերեանը պարգեւատրեց միութեան «Արտակարգ» պատուանշանով:

Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդը հաստատեց նաեւ, որ ՀՄԸՄԻ նկատմամբ խստապահանջ ըլլալու հանգամանքին ետին կայ այն իրականութիւնը, որ այս միութիւնը հպարտութիւն առթող միութիւն է, ուստի ան պէտք է կառչած մնայ իր առաքելութեան եւ կարգապահութեան:

Պարգեւատրումէն ետք իր արտասանած խօսքին մէջ, Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան յայտնեց, թէ ՀՄԸՄԸ այն միութիւնն է, որ մնայուն ներկայութիւն է հայկական կեանքին մէջ, ուր ան կը տողանցէ կարգապահ ու կազմակերպւած շարքերով: Ան դիտել տուաւ, որ ՀՄԸՄԻ-ականները միշտ ալ զատորոշուած են իրենց յղուած նկարագիրով ու վարուելակերպով, գործ ստանձնելու եւ գայն լիովին կատարելու պատրաստակամութեամբ, աւելցնելով, որ անոնք իրենց աշխատանքով արդէն իրենք զիրենք կը բացայայտեն: «Այս միութիւնը հոգեկան իանդավառութիւն եւ հպարտու-

Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդը հաստատեց նաեւ, որ ՀՄԸՄԻ նկատմամբ խստապահանջ ըլլալու հանգամանքին ետին կայ այն իրականութիւնը, որ այս միութիւնը հպարտութիւն առթող միութիւն է, ուստի ան պէտք է կառչած մնայ իր առաքելութեան եւ կարգապահութեան:

Պարգեւատրումէն ետք, խորհրդա՞ժողովին մասնակիցները ճաշի հիւրը եղան Առաջնորդ Սրբազան Հօր: Ճաշին ներկայ գտնուեցան նաեւ ՀՄԸՄԻ Կեդրոնական Վարչութեան նախկին անդամներ՝ եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան, Պատրիկ Կիւլպէնկեան, Արա Յակոբեան, Ստեփան Տէր Պետրոսեան, Պետիկ Սապունճեան եւ Բիւզանդ Թորիկեան: Այս առիթով, տէր եւ տիկին Ստեփան եւ Թամար Տէր Պետրոսեաններ 5000 ամերիկեան տոլարի նուիրատուութիւն մը կատարեցին ՀՄԸՄԻ Արարատեան կարգի իրագործման ի խնդիր:



ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՄԱՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ ՄԱՅՐԱՎԱՆՔ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Նոյն օրը, առաւօտեան ժամը 10ին, խորհրդա՞ժողովի մասնակիցները այցելեցին Անթիլիասի Մայրավանք, ուր ծանօթացան «Կիլիկիա» թանգարանին, կաթողիկոսարանի մատենադարանին եւ Եղեռնի նահատակաց յուշարձանին:

(Շար.ը՝ էջ 27)



Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄԻ ՆՈՒԻՐՈՒՄԸ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ՝ ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԱԳՆԵՐՈՒ ՄԷՉ

Մարտ Բեշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

Ծրագրաւորուած աշխատանքները միշտ ալ յաջողութեամբ պսակուած են, առաւելագոյն արդիւնքը արձանագրելով: Յատկապէս միութենական կեանքի մէջ շատ կարեւոր է ռազմավարական ծրագրումը՝ ճշդելու համար անոր ուղեգիծը եւ առաւելագոյն միջոցներով իրականացնելու հետապնդուած նպատակները:

Այս սկզբունքով է, որ Հ.Մ.Ը.Մ.Ի Յրդ Պատգամաւորական Ժողովին որոշումով, Կեդրոնական Վարչութիւնը յառաջացուցած է ռազմավարական ծրագրումի յանձնախումբ մը, որ կը բաղկանայ հետեւեալ եղբայրներէ-

Արմէն Աբրահամեան (ատենապետ), տոքթ. Շահէ Ենիգոմշեան, դոկտ. Ռազմիկ Շիրինեան, Վիգէն Դաւիթեան, Արամ Սիւեռեան, Արտո Աճէմեան եւ Գէորգ Մանկէլեան: Յանձնախումբին մօտ Կեդրոնական Վարչութեան կապն է փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեան:

Ռազմավարական ծրագրումի համար, յանձնախումբը աւելի քան երկու տարի է ի վեր աշխատանք կը տանի Հ.Մ.Ը.Մ.Ի ներկայ իրավիճակը քննելու եւ գէթ ապագայ տասնամակի ուղեգիծը ճշդելու համար: Երկու տարուան արդիւնաւէտ աշխատանքէ ետք, Կեդրոնական Վարչութիւնը կազմակերպեց եւօրեայ համագումար մը, որպէսզի քննեն էլ իր արժեւորումը կատարէ ցարդ իրականացած աշխատանքին:

Համագումարը տեղի ունեցաւ 16-18 Ապրիլ 2010ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային

Վարչութեան կեդրոնին մէջ, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի չրջաններու ռազմավարական ծրագրումի պատասխանատու ներկայացուցիչներուն, որոնք ժամանած էին Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւելեան եւ Արեւմտեան Մ. Նահանգներու, Գանատայի, Արժանթինի, Ֆրանսայի, Եգիպտոսի եւ Լիբանանի շրջաններէն:

Համագումարին հեռախորհրդակցական միջոցով (skype) հետեւեցան Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի վարչութեան փոխ ատենապետ եղբ. Օշին Փիրումեան եւ Եւրասիոյ Շրջանային Սկաուտական Յանձնախումբի (Eurasia Regional Scout Committee) ատենապետ եղբ. Բագրատ Եսայեան:

Համագումարը սկիզբ առաւ Ուրբաթ, 16 Ապրիլի երեկոյեան: Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անունով ներկաները ողջունեց փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեան, որ բարի գալուստ

մաղթեց եւ շնորհակալութիւն յայտնեց մասնակիցներուն, որոնք իրենց սուղ ժամանակը տրամադրելով, հեռուոր շրջաններէ հաւաքուած էին «Հ.Մ.Ը.Մ.ի շրջաններու ռազմավարական ծրագրումի երկամեայ իրենց աշխատանքները ներկայացնելու, միութեան աշխատանքային դժուարութիւններուն լուծումներ տալու եւ ընդհանուր ուղղութիւններ ստանալու համար»:

Համագումարին մասնակցեցաւ նաեւ Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութիւնը (Հ.Մ.Ա.Կ.), յանձինն եղբ. Էդուին Նաճարեանին, որ բարձր գնահատելով կազմակերպուած համագումարը, Հ.Մ.Ա.Կ.ի Կեդրոնական Վարչութեան անունով շնորհակալութիւն յայտնեց հրաւերին համար, ընդգծեց կարեւորութիւնը նման համագումարներու կազմակերպման եւ յոյս յայտնեց, որ նման միացեալ աշխատանքները կը շարունակուին:

Այնուհետեւ համագումարը սկսաւ դուրս. Ռազմիկ Շիրինեանի «Սփիւռքեան իրականութիւններ» նիւթին ներկայացումով: Եղբայրը առաջին հերթին բացատրեց Սփիւռքի համակարգը եւ Սփիւռք-Հայաստան յարաբերութիւններու հասկացողութիւնը: Ապա, գրոյցի

ձեւով շարունակելով իր նիւթին ներկայացումը, ան անդրադարձաւ Սփիւռքի պատմական հոլովոյթին՝ Յեղասպանութենէն ետք, սփիւռքեան գաղութներու հաստատման եւ կազմաւորման, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան, հայրենամերձ եւ հեռակայ գաղութներու հոլովոյթին, Սփիւռքի ներկային, անկախ Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ գոյութիւն ունեցող կապերուն մասին: Եղբայրը իր ընդգծումներուն մէջ ներգրաւեց ներկաները՝ օգտակար տեսակէտներ քաղելով անոնցմէ:

Օրուան երկրորդ նիւթը՝ «Ռազմավարական ծրագրումը Հ.Մ.Ը.Մ.ի համար» ներկայացուց տղթ. Շահէ Ենիգոմշեան, որ առաջին հերթին բացատրելով Հ.Մ.Ը.Մ.ի համար ռազմավարական ծրագրումի կարեւորութիւնը, անոր իրականացման համար անհրաժեշտ գտաւ Հ.Մ.Ը.Մ.ի շրջապատին քննարկումը, գաղութային փոփոխութիւններուն մասին տեղեկանքը, գաղութներու մարդկային ուժի մակարդակը, հայ լեզուի գործածութեան հարցը, աշխատանքային յատուկ քննարկումներու նախաձեռնութիւնն ու նիւթականի ծրագրաւորումը եւ թափանցիկ ըլլալու անհրաժեշտութիւնը: Եղ-

բայրը եւս իր մատնանշումներուն բաժնեկից դարձուց ներկաները:

Խիստ շահեկան այս գոյգ դասախօսութիւններէն ետք, յանձնախումբի ատենապետ եղբ. Արմէն Աբրահամեան ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի ներկայ իրավիճակը համաշխարհային մակարդակի վրայ: Ան ժողովականներուն ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր շրջաններու, մեկուսիներու եւ մասնաճիւղերու անցեալի եւ ներկայի պատկերը, արձանագրած յաջողութիւններն ու նուաճումները, դժուարութիւններն ու ճախողութիւնները: Եղբոր ուսումնասիրութիւնները եւ բացայայտուած ախտաճանաչումները կատարուած էին շրջաններուն եւ մասնաճիւղերուն յղուած հարցարաններու պատասխաններէն, «Մարզիկ»ի յօդուածներէն, Հ.Մ.Ը.Մ.ի անցեալի Ընդհանուր Ժողովներու արձանագրութիւններէն, հեռաձայնային եւ այլ հաղորդակցութեան կապերով:

Կատարուած ուսումնասիրութիւններու լոյսի տակ, ժողովականները լայնօրէն անդրադարձան միջոցներու մասին, որոնք Հ.Մ.Ը.Մ.ը աւելի հետաքրքրական ու քաջողական կրնան դարձնել հայկական գաղութներէն ներս, ընդգծեցին հայ լեզուի եւ հայրենասիրութեան ոգին սկսուտական եւ մարզական շարքերէն ներս աւելի հզօրացնելու, աշխատանքային արհեստավարժ միջոցներ որդեգրելու եւ երիտասարդութիւնը ղեկավարութեան առաջնորդելու, ինչպէս նաեւ զանոնք հայրենիքի հետ առնչելու կարեւոր ձեւերը:

Ընդգծուեցաւ յատուկ աշխատանք տանիլ ոչ հայկական վարժարաններ յաճախող աշակերտութիւնը ընդգրկելու համար Հ.Մ.Ը.Մ.ի եւ ընդհանրապէս հայկական շրջանակներէն ներս: Խիստ կարեւոր գտնուեցաւ նաեւ համագործակցութեան ստեղծումը Հայաստանի ըՍփիւռքի նախարարութեան հետ, ինչպէս նաեւ





Եղբայր Արմեն Աբրահամեան



Եղբ. Շահե Ենիգոմշեան



Դոկտ. Ռազմիկ Շիրինեան

Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութեան ընդարձակումը հայրենիքի մէջ:

Առաջին օրուան արդիւնաւէտ աշխատանքներէն ետք, Շաբաթ, 17 Ապրիլի ամբողջ օրը, մասնակիցները բաժնրւեցան երկու խումբի եւ մանրամասնօրէն քննեցին համաշխարհային հասկացողութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի զօրութիւնները, տկարութիւնները, պատեհութիւններն ու մարտահրաւէրները հետեւեալ մարզերէն ներս.-

- ♦ Հայերէն լեզուի սահուն խօսակցութիւն.
- ♦ Մարզական ծրագիրներ.
- ♦ Հայ երիտասարդութիւնը ներգրաւելու միջոցներ.
- ♦ Սփիւռքի մէջ տարածուելու ձեւեր.
- ♦ Տնտեսական ծրագիրներ.
- ♦ Հ.Մ.Ը.Մ-ը Հայաստանի մէջ.
- ♦ Ղեկավարման կառոյց.
- ♦ Անդամակցութեան պահպանում.
- ♦ Միութենական կառոյց.
- ♦ Քարոզչութիւն.
- ♦ Սփիւռքի նախարարութեան հետ գործակցութիւն.
- ♦ Սկստակական ծրագիրներ.
- ♦ Գործակցութիւն հայկական այլ կազմակերպութիւններու հետ.
- ♦ Արդի միջոցներու որդեգրում.
- ♦ Արհեստավարժներու օգտագործում.
- ♦ Կամաւոր աշխատանք-Արդիւնաւէտ օրուան աշխատանքներէն ետք, մասնակիցները Կլէնտէյլի

«Ֆինիսիա» ճաշարանը ունեցան խրախուսեցին շրջաններու մտերմացան եւ Հ.Մ.Ը.Մ-ի շրջաններու աշխատանքներուն մասին յաւելեալ տեղեկութիւններ փոխանցեցին իրարու:

Կիրակի, 18 Ապրիլի առաւօտեան, համագումարի մասնակիցները Հ.Մ.Ը.Մ-ի ապագայ տեսլականին կարեւորութիւնը ընդգծելով, եզրափակեցին Հ.Մ.Ը.Մ-ի հզօրացման նպաստող խմբակային ուսումնասիրութիւնները եւ ներկայացուցին իրենց ախտաճանաչումները եւ Հ.Մ.Ը.Մ-ը երիտասարդութեամբ հզօրացնելու իրենց առաջարկները: Համագործակցութեան հեռանկարով, մասնակիցները օգտակար նկատեցին ընդհանրական համացանցի մը ստեղծումը, որպէսզի բոլոր Հ.Մ.Ը.Մ-ականները կարենան օգտագործել զայն:

Համագումարը վերջ գտաւ նոյն օրը կէսօրին: Յանձնախումբին անունով շնորհակալական ելոյթ ունեցաւ եղբ. Արմէն Աբրահամեան, որ շնորհակարարութեամբ ներկաներու հետաքրքրութիւնն ու օգտակար ներդրումը համագումարի ընթացքին՝ վստահեցուց, որ համագործակցութեամբ կարելի է յանձնախումբին ջարդ առած նախնական քայլերը զարգացնել

եւ իրենց նպատակակէտին հասցնել:

«Դրական մեծ քայլ առնուեցաւ այս հանդիպումով, որ իր օգրակար անդրադարձը պիտի ունենայ սփիւռքեան մեր իրականութեան մէջ: Միասնաբար, լուրջ հետեւողականութեամբ եւ համաշխարհային մակարդակով մենք պիտի կարողանանք մեր հարցերը լուծել», ընդգծեց եղբ. Աբրահամեան:

Իր սրտի խօսքը փոխանցեց նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան փոխատենագետ եղբ. Գօգօ Պալեան, որ առաջին հերթին շնորհակալութիւն յայտնեց շրջաններու ռազմավարական ծրագրումի ներկայացուցիչներուն՝ իրենց մասնակցութեան համար, ինչպէս նաեւ յանձնախումբին, իր յարատեւ եւ համոզուած աշխատանքին համար: «Իբրեւ իրաւ Հ.Մ.Ը.Մ-ականներ, դուք կարողացաք ձեր մտահոգութիւնները փոխանցել եւ Հ.Մ.Ը.Մ-ի ապագայ տեսլականին կարեւորութիւնը մատնանշելով, անոնց լուծումներ գտնելու որոնումները կատարեցիք: Առաջին յաջող քայլը առիթ, սակայն տուն վերադառնալէ ետք տակաւին մեծ գործ ունիք կատարելիք: Նոյն ոգիով շարունակեցէք ձեր միութենական պարտականութիւնները եւ Հ.Մ.Ը.Մ-ի առողջ սերունդներ դաստիարակելով հզօրացուցէք այս հայկայ կազմակերպութիւնը», եզրակացուց եղբայրը:

Համագումարը վերջ գտաւ «Յառաջ նահատակ» քայլերգով: Միասնական ճաշ մը կատարելէ ետք, մասնակիցները հեռացան կեդրոնէն, Հ.Մ.Ը.Մ-ին հաւատարիմ մնալու եւ անոր շարքերը հզօրացնելու հաստատակամութեամբ:



Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան փոխատենագետ եղբ. Գօգօ Պալեան:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԴԵՐԸ ԱՆՑԵԱՎԻՆ, ԱՅՍՕՐ ԵՒ ՎԱՂԸ

Միտրան Շիմշիրեան ՊԵՅՐՈՒԾ

20 րդ դարու սկիզբը, Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութենէն առաջ, Պոլսոյ կարգ մը հայ մտաւորականներու, ուսուցիչներու եւ հասարակական գործիչներու մօտ արդէն սկսած էր զարգանալ մարզանքի եւ սկստութեան հանդէպ հետաքրքրութիւնը: Կարծես թէ այդ մարդիկը կը նախատեսէին, թէ զայիք ժամանակաշրջանը այդ երեւոյթներուն ժամանակաշրջանն է:

Այս պատճառով Շաւարշ Քրիսեան կը մեկնի Անգլիա, որպէսզի աւելի լաւ ձեւով ուսումնասիրէ հոն տեղի ունեցող գործունէութիւնները եւ զանոնք բերէ Պոլիս՝ առ ի գործադրութիւն:

Անգլիայէն վերադարձին, հայ մարզական կեանքը զգալի զարթոնք մը կ'ապրի Պոլսոյ եւ գաւառներուն մէջ: Կը հիմնուին տասնեակ մը մարզական ակումբներ: Կը հրատարակուի հայ մարզական առաջին թերթը՝ «Մարզաշխարհ»ը եւ հայ մարզիկներ իրենց մասնակցութիւնը կը բերեն Սթոքհոլմի ողիմպիական մրցումներուն, ներկայացնելով Օսմանեան կայսրութիւնը:

ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ ԳՈՐԾՈՒՂՈՒՄ

Եղեռնէն հազիւ վերականգնած, Հ.Մ.Ը.Մ.Ի ստեղծման գաղափարը վերստին թափ կ'առնէ: Կը կազմուին Հ.Մ.Ը.Մ.Ի առաջին մասնաճիւղերը, որոնք առաւելաբար կը զբաղին ֆուլթպոլով, աթլետիկով եւ սկստութեամբ:

Մէջտեղ կու գայ սկստութիւն: Շուտով սկստութիւնը մոտք կը գործէ որբանոցներ՝ որբերը կազմակերպելու եւ անոնցմէ ապագայ առողջ հայերը պատրաստելու նպատակով:

Հ.Մ.Ը.Մ.Ի ստեղծումը կը դառնայ ողջունելի երեւոյթ: Պոլսոյ Պատրիարքարանը կ'իւրացնէ Ծրագիրը: Ազգը կ'ընդունի Հ.Մ.Ը.Մ.ը:

1920ին Հ.Մ.Ը.Մ. կը հրաւիրուի հայրենիք եւ հոն հիմը կը դնէ սկստական շարժումին:



Այս հանգրուանին, բոլորին մտահոգութիւնը նոյնն է՝ սերունդը դաստիարակել մարզանքի եւ սկստութեան միջոցով:

Հ.Մ.Ը.Մ.Ի աշխատանքը այնուհետեւ թափ կ'առնէ եւ կը գնահատուի ժողովուրդին կողմէ: Մասնաճիւղերու ցանցը կ'ընդլայնի: Կը ստեղծուի համակիրներու լայն շրջանակ:

Այս ընթացքը առիթ կու տայ, որ Հ.Մ.Ը.Մ.Ի վարչութիւնը կազմակերպէ բոլորը համախմբող ողիմպիական մարզախաղեր, որոնք օրին կը գնահատուին Պոլիս գտնուող օտար բանակներու պատասխանատուներուն եւ դեսպաններուն կողմէ: Սկստական տպաւորիչ տողանցքը առիթ կու տայ, որ Սըր Պէյտըն Փաուըլ գնահատէ հայ սկստութիւնը, ինչ որ ապագային իր դրական անդրադարձը կ'ունենայ հայ սկստութիւնը միջազգային ընտանիքին մէջ ընդունելու աշխատանքին մէջ:

ՊՈԼԻՍԷՆ ԴՈՒՐՄ

Հ.Մ.Ը.Մ.Ի գործունէութեան փայլուն օրերը շուտ վերջ կը գտնեն: Քաղաքական պայմաններու բերումով Հ.Մ.Ը.Մ. ինքզինք կը լուծէ Թուրքիոյ մէջ եւ կը փոխադրուի Սփիւռք, ուր կը մասնակցի հայկական գաղութներու կազմակերպման ու հայապահպանման գործին:

Հ.Մ.Ը.Մ. ազգային հպարտութիւն եւ խանդավառութիւն կու տայ հայրենակարօտ հոգիներու: Յաղթանակի բերկրանքը կը փոխանցէ երիտասարդութեան, երբ միջ-մասնաճիւղա-

յին իր մարզախաղերով (Հալէպ, Պէյրութ, Գահիրէ...) անգամ մը եւս քով-քովի կը բերէ հայութեան նոր սերունդի զաւակները:

ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵՒ ԱՄՐԱՊԵՏՈՒՄԸ

Ընդհանուր խանդավառութենէ ետք, Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերը իրենք զիրենք կազմակերպելով կ'ունենան ակումբներ, բազմատասնեակ մարզական խումբեր եւ սկստակական ստուար շարքեր: Անոնք կը բացուին տեղական մարզական կեանքերուն: Կը մասնակցին Փութպոլի, պասքեթպոլի եւ այլ մարզախաղերու տեղական ախոյեանութիւններուն եւ մարզական փայլուն էջեր կը գրեն Սուրիոյ, Լիբանանի, Եգիպտոսի, Յունաստանի մէջ եւ այլուր:

ՀԱՄԱՀԱՅՅԱԿԱՆ ԿԱՌՈՅՑԻ ՎԵՐԱԾՈՒՄԸ

Հ.Մ.Ը.Մ-ի աշխարհատարած մասնաճիւղերը մէկ կառույցի մէջ համախմբելու եւ նպատակասլաց գործունէութեան մղելու պահանջը կը շեշտուի 1965էն ետք: Հայութիւնը կ'եռայ պահանջատիրական տրամադրութիւններով: Ամէն տեղ կազմակերպման եւ հզօրացման ձայներ կը լսուին: Հ.Մ.Ը.Մ. 1974ին կը վերածուի համագաղութային կառույցի: Կը ստեղծուի Կեդրոնական Վարչութիւն, որուն շնորհիւ նոր թափ կ'առնեն ՍՓԻԻՖԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱԽՄԻՐԻՆ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական նախաձեռնութիւնները (մարզախաղեր, բանակումներ, իմբայետական համագումարներ): Այս աշխատանքին կը նպաստէ միութեան պաշտօնաթերթ «Մարզիկ» ամսաթերթին ստեղծումը 1980ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՅՈՒՄԸ

Հայաստանի անկախութեան հետ, նոյնիսկ անկէ առաջ, 1989ին, Հ.Մ.Ը.Մ. մուտք կը գործէ հայրենիք: Աւելի ուշ փորձեր կ'ըլլան նաեւ մուտք գործելու Արցախ եւ Զաւախք: Պահ մը բոլորին ուշադրութիւնը կ'ուղղուի հայրենիք: Հայրենիք վերադառնալու եւ ազգային մեր արժէքները հայրենի նոր սերունդին փոխանցելու հոգը կը դառնայ տիրապետող մտածում, գործունէութեան գլխաւոր առանցք:

Հ.Մ.Ը.Մ. հայրենիքի մէջ կը կազմակերպուի իբրեւ սկստակական շարժում: Մարզական կեանքի կարիքը չի զգացուիր՝ նկատի ունենալով Հայաստանեան պայմանները:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. 1997ին կը ստանայ միջազգային ճանաչում եւ հայրենի սկստակութիւնը կը ներկայացնէ Միջազգային Սկստակական Շարժումին մօտ եւ կը հանդիսանայ սկստակական եւրօ-ասիական բաժանմունքի հիմնադիրներէն:

Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութեան վերոյիշեալ հանգրուանները կու գան հաստատելու, որ միութեան 92 տարուան գործունէութեան նպատակը եղած է **մարզանքի եւ սկստակութեան ճամբով**:-

- 1) Հայ նոր սերունդներու դաստիարակութիւնը:
- 2) Ազգի համախմբումը եւ ընդհանրական նպատակի մը ծառայութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.Ը ԱՅՍՈՐ

Հայաստանի անկախացումէն եւ անոր զուգարկապող հա-

մաշխարհայնացումի երեւոյթին ընդհանրացումէն ետք, հայ կեանքը կրեց հիմնական փոփոխութիւններ՝ մտածելակերպի, գործելաձեւի եւ ընդհանուր հետաքրքրութիւններու իմաստով:

Այսօր մենք թեւակոխած ենք Չարդ դարու երկրորդ տասնամեակը: Եղեռնէն ազատած որբեր չկան այլեւս: Անուս պատանիներ ալ չկան: Ոչ ալ մէջտեղ մնացած տղաք կան: Միջոցները, գորս կ'օգտագործէինք մեր տղաքն ու աղջիկները դաստիարակելու համար, յատկապէս մարզական ճիւղին մէջ, այժմ կորսնցուցած են իրենց ազդեցութիւնը:

Միտղական մարզանքը նահանջի մէջ է: Ամէնուր, կարգապահութեան հասկացողութիւնը փոխուած է եւ սկստակութիւնը ընդհանուր նահանջի մէջ է:

Փոխուած է նաեւ մեր ժողովուրդի տեղաբաշխումը, ինչ որ լուրջ դժուարութիւններու դիմաց դրած է միութիւնը: Միջին Արեւելքի հայաշատ գաղութները նօսրացած են: Արեւմուտեան գաղութները կ'աճին, սակայն տեղական դժուարութիւնները անկարելի կը դարձնեն աշխատանքի նախկին պայմաններու ստեղծումը: Գործ ունինք նաեւ անձանօթ Սփիւռքի մը հետ, որ համայնքային կազմակերպ կեանք չունի (Արեւելեան Եւրոպա, Ռուսիա...):

Հայաստանի անկախութիւնը պատճառ դարձած է, որ Հ.Մ.Ը.Մ.ականներու խանդավառութիւնը որոշ չափով նուազի ազգը եւ հայրենիքը յուզող հարցերու նկատմամբ: Կան փոխադարձ յուսախաբութիւններ (Սփիւռք թէ հայրենիք):

Միւս կողմէ, համաշխարհայնացումը եւ համացանցը զգալիօրէն փոխած են նոր սերունդին մտածելակերպը: Մարզական խաղերը, բանակումները եւ քայլարշաւները դադարած են այլեւս պատանիներուն հետաքրքրութիւն ներկայացնելէ, քանի որ ստեղծուած են զանոնք փոխարինող զբաղումի այլ միջոցներ՝ պատկերասփիւռ, ելեկտրոնային խաղեր, համացանց, բլիջային հեռաձայն եւ այլն:

Արհեստավարժ մարմնամարզը դարձած է տիրական, ուր մարդիկ եթէ մարմնամարզ պիտի ընեն, ատիկա կ'ընեն ակունկալութեամբ, ըսելով որ եթէ ես դիտողին հաճոյք պիտի պատճառեմ, ատոր գի՛նը կ'ուզեմ: Օրինակները շատ են եւ միութեանական մեր կեանքին մէջ սկսած են աւերներ գործել:

Ազգային պատկանելիութեան զգացումը եւս փոխուած է շատերու մօտ: Ազգային բարքերուն, լեզուին, աւանդութիւններուն, կենցաղին եւ մշակոյթին հետ կապը իջած է իր նուազագոյն մակարդակին: Օրինակ, օտար ամուսնութիւններու թիւը (50%), օտար վարժարաններ յաճախելու երեւոյթը, օտարներու ձեռամբ զաւակներու դաստիարակութիւնը եւ, վերջապէս, համակարգիչին դրական կողմին զուգահեռ, անոր ժխտական երեսը՝ սերունդներու ազգային նկարագրին խաթարման պատճառ դարձած է:

Այս բոլոր երեւոյթները եւ մտածումները կը պարտադրեն, որ իբրեւ պատանիներ եւ երիտասարդներ դաստիարակող միութիւն, Հ.Մ.Ը.Մ. լրջօրէն մտածէ **ՆՈՐՈԳՈՒԵԼՈՒ** մասին, օգտագործելով Չարդ դարու բարիքները՝ պատանիներու եւ երիտասարդներու դաստիարակութեան համար, որպէսզի անոնք մղուին ազգային մեր **ընդհանրական նպատակներու** իրագործման:

Այսօր, Հ.Մ.Ը.Մ. կարիքը ունին անմիջական նոր ծրագրում, մինչև որ պատրաստուի միութեան գալիք ժամանակամիջոցի երկարաշունչ ռազմավարութիւնը:

Ծանօթ է, որ Հ.Մ.Ը.Մ.-ի վերջին Ընդհանուր Ժողովը որոշում տուաւ ստեղծելու ծրագրաւորումի մարմին մը, որ արդէն սկսած է աշխատանքի եւ կարիքը ունի իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.-ականի ներդրումին եւ բոլոր վարչութիւններու գործակցութեան:

Ուրեմն, ի՞նչ ընել, ի՞նչպէս ընել:

Հարկ է առաջին հերթին կատարել աշխատելաձեւի նոր տեսակներու փնտռութիւններ: Հոս կ'ենթադրուի վարչական մեր կառուցներու աշխատելաձեւի փոփոխութիւն, մարմիններու հետ յարաբերութիւններու ոճի փոփոխութիւն, հաղորդակցութեան ձեւերու փոփոխութիւն եւ այլն:

Նոյնը կարելի է ըսել միութեանական գործունէութեան մէջ մեր կիրարկած միջոցներուն մասին, որոնք այլեւս դադարած են քաջողական ըլլալէ: Ինչպէս նշեցինք, մարմնամարզը արհեստավարժ ըլլալով դարձած է արտադրութիւն: Մարմնամարզ կիրարկողները դրամ շահելու եւ ապրուստ հոգալու կը ծառայեցնեն այդ մէկը, մինչդեռ մեզի համար մարմնամարզը միջոց մըն է մեր նպատակներուն հասնելու համար:

Առ այդ, պէտք է արդի պայմաններու ընծայած միջոցները ուսումնասիրել եւ մեր նպատակին հասնելու միջոցի վերածել, որպէսզի ունենանք մասսա մը, որ հետեւի մեզի:

Պահելով հանդերձ մեր ընդհանրական արժէքները եւ սկզբունքները, պէտք է յարմարիլ տեղական պայմաններուն եւ ըստ այնմ ճկուն գործելաձեւ որդեգրել շրջանէ շրջան: Միաժամանակ, մարզական մասնագիտութիւններու (Ֆուլթպոլ, պասքեթպոլ) դպրոցներ պէտք է յառաջացնել՝ ըլլան անոնք անհատական թէ հաւաքական:

Սկաուտական ճիւղին մէջ հարկ է զարգացնել մասնագիտական պէճերու դրութիւնը եւ զանոնք ծառայեցնել աւելի մեր գաղափարական հասկացողութեան եւ ոչ թէ ինքնանպատակ ուղղութիւններու:

Խմբապետները ուղղել, որ հետեւին տեղական եւ միջազգային սկաուտութեան նորութիւններուն (դասընթացքներ, կայք էջեր)՝ ծանօթանալու եւ կիրարկելու մասնագիտական նորութիւններ: Նաեւ քաջալերել զանոնք, որ ստանան տախտակի պէճերը, որպէսզի հասնին դաստիարակի մակարդակին:


Այս բոլորին լոյսին տակ, Հ.Մ.Ը.Մ. կարիքը ունի նոր ծրագրում, նախատեսելով գալիք օրերու արագընթաց վազքը, ճշդելով ազգային նպատակներու իրագործման հասնելու մեր միջոցները, գործընթացները եւ աշխատանքի ոճը, որոնք պիտի ըլլան համապարփակ եւ իրենց մէջ պիտի ներառեն աշխարհացրիւ վիճակներու մէջ ապրող հայ ժողովուրդի բոլոր հատուածները:

ARMENIA


for private and group trips

www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages



WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY



Photos: © Yann Athus-Berthod / Agence de presse vue du ciel. Licence 075 960031. Studio V&A 2005 1605

Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS

Select your Journey

Guided Tours for 8 Days or 12 Days

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
saber@arminco.com

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՉԱԴՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ



**Ներսէս Արք. Բախտիկեան (1911-1989)
ԱՆՏԻՊ, ԺԷ. ՄԱՍ**

Կեղրոնական Յանձնախումբը Ապրիլ 6ի նիստին նկատի առնելէ ետք երկու մասնաճիւղերու կացութիւնը, ժողովը կ'որոշէ հետեւեալ կերպով հարթել դժբարութիւնները.-

«1. Մինչեւ Մարտ ամսոյ վերջ, երկու մասնաճիւղերու ամսավճարները յանձնել նախկին գանձապահ Արամ Քեաեայեանին:

«2. Երկու մասնաճիւղերէն մէյմէկ քննիչ ղրկել՝ քննելու Քեաեայեանին հաշիւները եւ Կեղրոնական Յանձնախումբին ներկայութեամբ բաժնել գումարը հաւասարապէս:

«3. Նկատի ունենալով Նահրի մասնաճիւղին Ֆութպոլիստներուն թիւը, ինչպէս նաեւ մասնաճիւղին եկամուտի վտիտ աղբիւրները, որոշեց ներկայ Ֆութպոլի բոլոր Փանելաները եւ գնդակները յատկացնել Նահրին:

«4. Արծաթ նշանակները հաւասարապէս բաժնել երկու մասնաճիւղերուն, ինչպէս նաեւ՝ միութեան մանր իրեղէնները:

«5. Սկառուտական գօտիները կը յատկացուին Ռաս Պէյրութի մասնաճիւղին, նկատի ունենալով, որ Նահր սկառուտական կազմակերպութիւն չունի:

«6. Յնոր տնօրինութիւն Առժամեայ Կեղրոնական Յանձնախումբին քով կը մնան արգելարչաւի արգելքները, ձող մը, սկաւառակ մը, գունդ մը»:

Պատրաստուած ներքին կանոնագիրը որպէսզի ի գօրու ըլլար, պէտք էր վաւերացուէր գոյգ մասնաճիւղերու վարչութիւններուն եւ Կեղրոնական Յանձնախումբին հետ գումարաւելիք խառն ժողովով մը, ուստի, Ապրիլ 13ի ժողովին կը հրաւիրուին «քննելու եւ վաւերացնելու» կանոնագիրը:

Ահա, ներքին կանոնագիրին տրամադրութիւնները.-

«Ա. Առժամեայ Կեղրոնական Յանձնախումբը մինչեւ Շրջանային Վարչութեան ընտրութիւնը վերին մարմինն է երկու մասնաճիւղերուն:

«Բ. Առժամեայ Կեղրոնական Յանձնախումբին ներկայացուցիչը կրնայ մասնակցիլ մասնաճիւղերու վարչական ժողովներուն՝ խորհրդակցական ձայնով:

«Գ. Հ.Մ.Ը.Մ-ի տարբեր շրջաններու, ինչպէս նաեւ տեղական օտար մարմնակրթական միութիւններու հետ յարաբերութիւնը կը պահուի Առժամեայ Կեղրոնական Յանձնախումբին կողմէ:

«Դ. Վարչութիւնները ազատ են, միութեան ծրագիր-կանոնագրի տրամադրութիւններուն համաձայն, վարել իրենց ներքին գործերը եւ պիւտճէն, երկու շաբաթը անգամ մը առժամեայ Կեղրոնական Յանձնախումբին ներկայացնելով գործունէութեան տեղեկագիր:

«Ե. Տարեկան ողիմպիականը եւ մարզական երեկոյթը կը կազմակերպէ Առժամեայ Կեղրոնական Յանձնախումբը եւ հասոյթը կը մատակարարուի իր կողմէ»: Ուրեմն, 5 Ապրիլ 1927ին պատրաստուած այս ներքին կանոնագիրը, որ հիմնաքարը պիտի հանդիսանար հետագային աւելի բարդ մեքենայի մը, կը վաւերացուի 13 Ապրիլ 1927ին:

Առժամեայ Կեղրոնական Յանձնախումբը կը ստանայ նամակներ՝ Չահլէէն ու Հայլէպէն: Չահլէ կը յայտնէ, որ ուրախութեամբ կը սպասէ Պէյրութի Բ. խումբին, իսկ Հայլէպ կը թուէ կատարուած դրական կարգադրութիւնները՝ դաշտի ապահովում, տոմսակներու հրապարակումի, իսկ Հայլէպի Արարատ Մարմնակրթական Ակումբը, «Ազգակ»ի մէջ կարդացած ըլլալով Պէյրութի խումբին Հայլէպ այցելութիւնը,

փափաք կը յայտնէ որ իրենք ալ մրցում ունենան Պէյրուսթի խումբին հետ: «Որոշ է,- կը կարդանք Կեղրոնական Յանձնախումբի ատենագրութեան մէջ,- մեր երկրորդ մրցումին համար Հայկալի մասնաճիւղին ընտրութեանը ձգած ըլլալով, ան ալ իր կարգին արդէն համաձայնած է տեղական խումբի մը հետ. որոշուեցաւ Արարատին ժխտական պատասխան տալ»: Յանձնախումբը ստացած ըլլալով նաեւ շոգեկառքի ընկերութեան կէս գին ճամբորդութեան հաւանութիւնը, խումբը պատրաստ է մեկնելու Հայկալ, 1927 Ապրիլ 15ին, իրիկուան ժամը 11ին: Ասիկա այն օրերուն խիզախ ու յանդուգն քայլ մըն էր, ինչպէս որ յստակ կերպով կ'երեւի թէ՛ ատենագրութեանց եւ թէ՛ փոխանակուած նամակներէն: Եւ սակայն պէտք էր այդ քայլը առնուէր, պէտք էր նոյն գաղափարի շուրջ, նոյն դրօշին ներքեւ հաւաքուած երիտասարդութիւնը չփման մէջ մտնէր գործնական գետնի վրայ, բարձրացնէր Հ.Մ.-Ը.Մ.-ի պանծալի դրօշը եւ անոր հովանիին ներքեւ գաղափար, նուիրում, զգացում եւ ապագայի հանդէպ հաւատք մէկ յայտարարի վերածուէր: Գալիք օրերուն անընդհատ շարունակուող միջ-մասնաճիւղային փառապանծ մրցումները իրենց սկզբնաւորութիւնը պիտի ունենային դժուարին երկունքով մը, բայց այդ պէտք էր ըլլար, եւ ահա Ապրիլ 15ին, ափ մը մարզիկներ ու տղաք, ինքնամոռաց հոգեկան խոր ապրումներով կը բարձրանան շոգեկառք: Աշխարհագրականօրէն իրարմէ շուրջ 400 քմ-ով հեռու գտնուող քոյր մասնաճիւղերու այս առաջին հանդիպումը որպէսզի դրօշմուէր ու նուիրականանար գաղափարական գեղեցիկ կնիքով մը, Պէյրուսթի մասնաճիւղը կ'որոշէ. «Հայկալի մասնաճիւղին նուիրել մետաքս կտորի վրայ պրոտէ բանուած միութեան նշանակը, շրջանակի մէջ, որուն պատրաստութիւնը սիրով յանձն կ'առնէ Հայկ Պուտագեան» (Ապրիլ 6ի նիստի արձանագրութիւն):

Խումբը հետը կը տանի նաեւ «Ազգակ»ի խմբագրութեան տրամադրած բաժակը՝ յանձնելու յաղթական խումբին:

Ինչ խօսք որ շոգեկառքին մէջ ուրախութեան բաժակը կը յորդի ու հոգեկան բարձր տրամադրութեան ժամեր կ'ապ-

րին մեկնողները: Շոգեկառքին ամէն մէկ կայարանի հանգուցը գիրենք աւելի կը մօտեցնէ չուկէտին ու վայրաշարժին հեւքին կը խառնուի իրենցինը ու, վերջապէս, Ապրիլ 16ի գեղեցիկ առաւօտ մը, երբ վայրաշարժը կանգ կ'առնէ Հայկալի կայարանին մէջ, մեծ կ'ըլլայ իրենց ուրախութիւնը եւ «եղբայրական այն սիրալիր ու խանդավառ ընդունելութիւնը, որ իրենց ցոյց կը տրուի կայարան փութացած Հայկալի մասնաճիւղի ղեկավարներուն ու բազմաթիւ անդամներուն կողմէ»:

Աւելորդ չենք նկատեր արտագրելու Հայկալի մասնաճիւղին կողմէ միջ-մասնաճիւղային առաջին հանդիպումին առթիւ հրապարակուած յայտագիր-նուիրատուին պարունակութիւնը:

**ՆՈՒՒՐԱՏՈՍՍ ԳԻՆ՝ 5 ՂՐՇ.
ՈՂՋ ՖՈՒԹՊՈՒՄ ՄԵԾ ՄՐՑՈՒՄՆԵՐ
Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԵՅՐՈՒՄԻ ՖՈՒԹՊՈՒՄ ԽՈՒՄԲԻՆ
ՀԱԼԷՊ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԹԻ
Ա. մրցում՝ Հ.Մ.Ը.Մ. Պէյրուսթ ընդդէմ Հ.Մ.Ը.Մ.
Հայկալի, 18 Ապրիլ 1927, Երկուշաբթի կ. Ե. Ժամը 3ին:
Բ. մրցում՝ Հ.Մ.Ը.Մ. Պէյրուսթ ընդդէմ տեղական
խումբի մը, 19 Ապրիլ 1927, Երեքշաբթի կ. Ե. Ժամը 3ին:
ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ ՊԱՂՏԱՏԻ
ԿԱՅԱՐԱՆԻ ԴԱՇՏԻՆ ՎՐԱՅ:**

Առաջին մրցումը որոշուած ժամուն կը կատարուի «Հագարի հասնող հայ եւ օտար հասարակութեան» աչքերուն առջեւ:

«Պարզ է,- կը գրէ Յակոբ Հայրապետեան «Ազգակ» 27 Ապրիլ թիւին մէջ,- որ բոլոր գաղութներուն մէջ հայութիւնը տեղացի ժողովուրդին իր լաւ կողմերով ծանօթացնելու սատարող մեծ ազգակներէն մէկն ալ հայ մարմնակրթական միութիւններն են, ըսենք, Հ.Մ.-Ը.Մ.-ը՝ իր վաթսունէ աւելի մասնաճիւղերով: Աննպաստ պայմաններու հարկադրանքով, իրենց համեստ ու սահմանափակ գործունէութիւնն իսկ գրաւած է ուշադրութիւն, արժանանալով գնահատութեան որքան հայերու, նոյնքան օտար շրջանակներու:

«Հ.Մ.-Ը.Մ.-ի Պէյրուսթի Ֆութպոլի խումբին Հայկալ այցելութիւնը անդրանիկ ձեռնարկն է Սուրիոյ եւ Լիբանանի մարզական աշխարհին մէջ:

«Ապրիլ 15, 1927ին, Պէյրուսթէն մեկնող խումբը յաջողօրէն կը հասնի Հայկալ: Տեղույն մասնաճիւղի անդամներէն մօտ 50 հոգի փութացած էին բարի գալուստի: Խումբը կ'առաջնորդուի պանդոկ, հիւրասիրուելով տեղույն մասնաճիւղի անդամներուն կողմէ:

«Օրեր առաջ արձագանգ գտած էր Հայկալի մէջ այս այցելութեան լուրը ու կը սպասուէր ժամանումին»:

(Շար. 17)

1953. Հ.Մ.Ը.Մ.ի Արաբ-բունարի շէփորախումբը:





ԱՐՍԷՆ ՎԵՆԿԸՐ՝ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՄԱՐԶԻՉԸ

Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

1996 թուականին, Արսենայի պատասխանատուները անակնկալորէն մարզիչի պաշտօնը կը վստահէին Մոլիէրի երկրէն Արսէն Վենկերի:

1949ին ծնած այս ֆրանսացին նախապէս ալ ծանօթ էր ֆուտպոլի աշխարհին մէջ, սակայն Արսենալ գալով Վենկեր դարձաւ խումբին յաղթանակներու կերտման բանալին:

Ո՞վ է Վենկեր:

Իբրեւ ֆուտպոլիստ, Վենկերը մաս կազմած է Միւլհաուզի եւ Սթրազպուրիի՝ 1973-1975: Ֆրանսայի ախոյեանութեան մրցումներուն ան կատարած է 147 մրցում եւ նշանակած է 24 կոլ: Վենկերը փայլուն խաղացող մը չէ եղած եւ շատ հաւանաբար գիտակցելով այդ կարողութեան՝ կանուխէն հետեւած է մարզումի դասընթացներու եւ 1981ին լքելով ֆուտպոլիստի իր ասպարէզը նշանակւած է Ա. Էս. Քանի օգնական մարզիչ:

1984ին ան կը նշանակուի

Նանսիի մարզիչ եւ երեք տարի կը մարզէ խումբը: Սակայն Նանսիի հետ Վենկերը յաջողութիւններ չ'ունենար: Նանսիի հետ ան կը կատարէ 114 մրցում: Նանսի կ'արձանագրէ 33 յաղթանակ, 30 հաւասարութիւն եւ 51 պարտութիւն:

1987ին կը նշանակուի Մոնաքոյի մարզիչ եւ կը սկսին անոր յաջողութիւններուն առաջին քայլերը: Նոյն տարին Մոնաքո կը շահի Ֆրանսայի ախոյեանութիւնը, իսկ երեք տարի ետք՝ Ֆրանսայի բաժակը: Մոնաքոյի հետ Վենկերը կը կատարէ 266 մրցում: 1995ին կը նշանակուի ճափոնական Նակոյա Կրամփուսի մարզիչ եւ տարի մը ետք կը հրաւիրուի Արսենալ:

Արսենալ գալով, Վենկերը ծանր պատասխանատուութիւն մը կը ըստանձնէր: Ան պէտք էր որ յաղթանակներով եւ տիտղոսներով գոհ պահէր անգլիացի համակիրները: Այս առաքելութեան մէջ Վենկերը չ'ընկերկիր: Անոր յամառ աշխատանքը եւ

ֆուտպոլի փիլիսոփայութիւնը կ'արդիւնաւորուին: Ան երեք անգամ (1997-1998, 2001-2002 եւ 2003-2004) կը շահի Անգլիոյ ախոյեանութիւնը: Զորս անգամ կը շահի Անգլիոյ բաժակը (1997-1998, 2001-2002, 2002-2003 եւ 2003-2004) եւ չորս անգամ ալ՝ Զերիթի Շիլտը (1998, 1999, 2002, 2004): Արսենալ մէկ անգամ կը հասնի Զեմփրնդ լիգի աւարտականին եւ կը պարտուի Պարսելտոնային (2006) եւ անգամ մըն ալ կը հասնի Եու. Է. Ֆ. Ա. ի աւարտականին եւ կը պարտուի Կալթաասարային (1999-2000):

Արսենայի հետ Վենկերը ցարդ կատարած է 786 մրցում՝ արձանագրելով 458 յաղթանակ, 192 հաւասարութիւն եւ 144 պարտութիւն:

Վենկերը շահած է նաեւ բազմաթիւ անհատական տիտղոսներ: Երեք անգամ ընտրուած է Անգլիոյ ախոյեանութեան լաւագոյն մարզիչը: Երկու անգամ ընտրուած է Ֆրանսայի տարուան լաւագոյն մարզիչը, մէկ անգամ Ճափոնի ախոյեանութեան լաւագոյն մարզիչը: Ան տիրացած է նաեւ բազմաթիւ այլ մրցանակներու:

Վենկերը Անգլիա եկող առաջին օտար մարզիչներէն եղաւ: Ան յաջողեցաւ փոփոխութիւն բերել անգլիական խաղաոճին մէջ, որ նախապէս



կը յատկանշուէր երկար փոխանցումներով: Փըթիի, Վիերայի, Պերքլամփի եւ Օվըրմարսի նման խաղացողներ կազմին միացնելով, ան յաջողեցաւ իր խաղաոճը պարտադրել ո՛չ միայն Արսենալի կազմին, այլեւ՝ ընդհանրապէս Անգլիոյ ախոյեանութեան: Ան իր խաղաոճին շնորհիւ յաջողեցաւ յաղթանակներու շարան մը պարգեւել Արսենալի եւ տիտղոսներ բերել լոյստոնեան ակումբին:



Վենկըր հաւաքական խաղի հաւատացող է: Ան նաեւ խումբը կը վստահի երիտասարդներու, անոնց միացնելով քանի մը փորձառու եւ նշանաւոր խաղացողներ: Փաստօրէն, համեմատած իր մրցակիցներուն, Արսենալ մեծ գումարներ չի տրամադրեր նոր խաղացողներու գնումի համար: Մինչ իր մրցակիցները միլիոնաւոր տոլարներ կը տրամադրեն «աստղեր» գնելու, Արսենալ հեռու է այդ մրցակցութենէն: Վենկըր առանց «աստղեր»ու ներկայութեան եւ առանց մեծագումար ներդրումներու տեւաբար կը մրցի ախոյեանութեան տիտղոսին համար: Այս տարեշրջանին Արսենալ գրաւեց երրորդ դիրքը, Չելսիի եւ Մ. Ետուսթրի ետին: Սակայն, անոր հիմնական կարգ մը մարզիկները յաճախ բացակայեցան մրցումներէն, ինչ որ

ծանր ազդեց խումբին արձանագրած արդիւնքներուն վրայ: Միւս կողմէ, պէտք է ընդգծել նաեւ, որ Վան Փերսիի, Ֆապրեքասի երկարատեւ կամ Արշաւինի եւ Նասրիի յաճախակի բացակայութիւնները չազդեցին Արսենալի խաղաոճին վրայ: Ահաւաստիկ հո՛ս պէտք է փնտռել Վենկըրի յաջողութեան գաղտնիքը:

Վենկըր ունի դիւրաբորբօք նկարագիր: Ան յաճախ, արդար կամ ոչ, կը քննադատէ իրաւարարները եւ կը կախակայուի: Յաճախ անուղղակի բանավէճի մէջ կը մտնէ իր մրցակից մարզիչներուն հետ եւ կոշտ արտայայտութիւններ կ'ունենայ անոնց հասցէին: Բայց եւ այնպէս, Արսենալի համակիրներուն կողմքն է ան: Անցեալ տարեշրջանի աւարտին, անոնք դաշտին մէջ բարձրացուցած էին պատառ մը, որուն վրայ գրուած էր «In Arsene we trust»:

Վենկըր յառաջիկայ տարեշրջանին համար ի՞նչ ծրագիրներ ունի, տակաւին անորոշ է: Սակայն պէտք է նշել, որ ան պիտի շարունակէ իր ոճը, այսինքն՝ համեստ միջոցներով լաւագոյն արդիւնքները շնորհել համակիրներուն եւ տեսարժան ֆուլթպոլ հրամցնել ֆուլթպոլասէրներուն:

'Made from one single slice of natural Australian opal'

Classique®

OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia*

Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com



ՔԱՀԱՄ-Ի 26ՐԴ ՄԱՐԶԱԽԱՊԵՐԸ ՈԳԵՒՈՐԵՑԻՆ



Մարտ Բեռլինացի ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

Կիրակի, 14 Մարտ 2010ին, շրջանի հայկական վարժարաններու աշակերտութեան ժամադրովայրը դարձած էին Կլենտոն Գոլֆի մարզադաշտերը, ուր առաւօտեան կանոնաւ ժամերէն սկսեալ տեղի ունեցան Քալիֆորնիոյ Հայ Աշակերտական Մարզախաղերու պասքեթպոլի ախոյեանութեան մրցումները, աննախընթաց զուարթ մթնոլորտի մէջ:

26 տարիներ անընդմէջ իրագործուող աշակերտական զեղեցիկ այս մարզախաղերու փակման փառահեղ հան-

դիսութիւնը տեղի ունեցաւ նոյն օրը, յետմիջօրէի ժամը 4.30ին, գոլֆի Փոլիպոլի դաշտին վրայ, մասնակցող վարժարաններու տնօրէններու, ուսուցչական կազմերու, բազմահարիւր ծնողներու, հիւրերու եւ Հ.Մ.Ը.Մ.ականներու ներկայութեան:

Հանդիսութիւնը սկիզբ առաւ դրօշակի արարողութեամբ, զոր կատարեցին Հ.Մ.Ը.Մ-ի Սան Ֆեռնանտո Հովիտի «Մասիս» մասնաճիւղի արի-արեւոյշները, ընկերակցութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան շեփորախումբին: Անոնք շեփորախումբի ազգայնաշունչ քայլերդանակներով, հպարտութեամբ եւ խրոխտ քալուածքով մարզադաշտ ներկայացուցին Մ. Նահանգներու,


Հայաստանի, Արցախի, Քալիֆորնիոյ եւ Հ.Մ.Ը.Մ-ի դրօշները, բարեկեցին ներկաները, քարացած հետեւեցան Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերդներուն եւ ապա դրօշները զետեղեցին նշանակուած վայրերը:

Այնուհետեւ, օրուան խօսնակներ Կասիա Մահսէրէճեան (հայերէնով) եւ Սիւզի Օհանեան (անգլերէնով) բարի գալուստի խօսքերով ողջունեցին ներկաները, ծանօթացուցին պաշտօնական հիւրերը, որոնց կարգին էին Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանը ներկայացնող Կլենտոնի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւներէն Կոմիտաս Քհնյ. Թորոսեան, Լոս Անճելլիսի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի գլխավոր հիւպատոսութեան հանրային կապի պատասխանատու Հայկ Աւետիսեան, Հ.Յ.Գ. Կեդրոնական Կոմիտէի անդամ եւ Հ.Մ.Ը.Մ-ական Յարութ Տօնոյեան, Հ.Մ.Ը.Մ-ի բարեկամներէն Ճորճ Գասարճեան, Հ.Մ.Ը.Մ-ի բարերարներէն Ալիս Անտոնեան, մրցումներուն մասնակցած հայկական վարժարաններու տնօրէն-տնօրէնուհիները եւ բազմաթիւ հիւրեր:

Դրօշակի տպաւորիչ արարողութեանէն ետք, տեղի ունեցաւ մրցումներուն մասնակցած 12 վարժարաններու աշակերտութեան փառահեղ տողանցքը: Այսպէս, յաղթական տրամադրու-



ՄԱՍՆԱԿՑՈՂ ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆՐ



Թեամբ տողանցելով, մարզադաշտ ներկայացան Ալէք Փիլիպոս, Արի Կիրակոս Մինասեան, Հայ քոյրերու, Թէքէեան Մշակութային Միութեան Արշակ Տիգրանեան, Հ.Բ.Ը.Մ.ի Մարի Մանուկեան-Տէմիրճեան, Մեսրոպեան, Մերտինեան, Մխիթարեան, Յովսէփեան, Շամլեան, Սահակ Մեսրոպ եւ Ֆերահեան վարժարաններու աշակերտ մարզիկ-մարզիկուհիները, իրենց մարզանքի ուսուցիչներուն ընկերակցութեամբ, բարեկեցին իրենց ծնողները, ուսուցիչներն ու տնօրէնները, արժանացան անոնց ջերմ ծափահարութիւններուն եւ ապա գրաւեցին իրենց տեղերը մարզադաշտին վրայ:

Շրջանային Վարչութեան պատգամը փոխանցեց մարզական ներկայացուցիչ եղբ. Ժանօ Գահվէճեան, որ գոհունակութեամբ բարի գալուստ մաղթելէ ետք ներկաներուն, շնորհաւորեց զանոնք ՔԱՀԱՄ-ի 26րդ մարզախաղերուն մասնակցութեան ուրախ առիթով, ինչ որ գեղեցիկ առիթ մը հանդիսացած էր մարզական խանդավառ մթնոլորտի մէջ համախմբելու մրցող աշակերտներն ու անոնց ծնողները:

Եղբայրը երախտագիտութեամբ արտայայտուեցաւ մարզախաղերուն մասնակցած վարժարաններու մարզիչներուն եւ անոնց օգնականներուն մասին, որոնք բծախնդրութեամբ եւ հոգատարութեամբ պատրաստած էին իրենց

խումբերը՝ մասնակցելու ՔԱՀԱՄ-ին եւ անոր ընդմէջէն ծանօթանալու Հ.Մ.Ը.Մ.ին:

«Հպարտութեամբ պէտք է նշել, որ այս մարզախաղերը ազգանպաստ եւ կարեւոր իրողութիւն են: Հ.Մ.Ը.Մ.ը իր երկարամեայ գործունէութեան ընթացքին զգալի ներդրում ունեցած է հայապահպանման, հայութեան ֆիզիքական եւ մտային զօրացման պատուաբեր ասպարէզներուն մէջ: Հ.Մ.Ը.Մ.ը սերունդներուն փոխանցած է զօրաւոր եւ առողջ ըլլալու երջանկութիւնը: Այս խաղերուն պարտուող չկար, որովհետեւ ինչպէս կը տեսնէք սիրոյ եւ միասնականութեան ոգին էր, որ այսօր յաղթեց եւ քով-քովի բերաւ այս բոլոր հայ աշակերտները:

Կեցցէ՛ք բոլորը», ըսաւ եղբ. Գահվէճեան:

ՔԱՀԱՄ-ի մասնակցած 12 հայկական վարժարաններու տնօրէններուն անունով ելոյթ ունեցաւ Թէքէեան Մշակութային Միութեան Արշակ Տիգրանեան վարժարանի տնօրէն Վարդգէս Քուրոյեան, որ առաջին հերթին շնորհաւորեց մարզախաղերուն մասնակցած աշակերտները, որոնք «Կարեւորը մասնակցիլն է, ոչ՝ յաղթելը» ողիմպիական խաղերու նշանաբանի ոգիին հետեւելով մասնակցեցան աշակերտական այս գեղեցիկ մարզախաղերուն:

Ապա, ՔԱՀԱՄ-ի նպատակին անդրադառնալով, Քուրոյեան շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ.ը՝ զայն կազմակերպելուն համար եւ ըսաւ. «Շնորհաւորելի է Հ.Մ.՝





ԸՄ-ը, որ ի մի կը հաւաքէ գանազան հոսանքներու, միութիւններու եւ յարանուանութիւններու պատկանող վարժարաններու աշակերտները, կը կազմակերպէ մարզական այս մրցաշարքը, ուր հայ պատանի-պարմանուհիները համերաշխ միջնորդաւ մէջ կը մրցին իրարու դէմ: Այս գեղեցիկ մրցումները ո՛չ միայն աշակերտներուն մէջ պատկանելիութեան զօրաւոր զգացում կը յառաջացնեն, այլ՝ իրարու քով կը բերեն տարբեր վարժարաններու հայ աշակերտները, զիրար ճանչնալու եւ զիրար գնահատելու»:

Քուրոյեան յատուկ գնահատանք արձանագրեց մարզախաղերուն օգտակար հանդիսացած ՀՄԸՄ-ի կամաւորներուն եւ յատկապէս մրցող խումբերու մարզիչներուն, «որոնք անձնուիրաբար մարզեցին մեր աշակերտները, որ պէսզի անոնք առողջ միտքեր ունենան, առողջ մարմիններու մէջ»:

Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի օրհնութիւններն ու հայրական պատ-

գամը ընթերցեց Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւներէն Կոմիտաս Քհնյ. Թորոսեան:

Մրբագանը բարձր գնահատելով ՔԱՀԱՄ-ի մրցումներու կազմակերպման նպատակը կ'ըսէր. «...ՔԱՀԱՄ-ի մրցումները չեն կազմակերպուիր յաղթողներ ու պարտեալներ ունենալու նպատակով, այլ անոնց հիմնական նպատակն է, պէ՛տք է ըլլայ՝ ազնիւ մրցակցութիւնը, ՀՄԸՄ-ական ոգիի իւրացումը, «Բարձրացի՛ր-բարձրացուր»

սկզբունքին հաւատարմութիւնը: Այս բոլորը կիրարկելով մենք կ'ունենանք միայն յաղթականներ, որովհետեւ այս մրցումները իրագործողը, հետեւաբար նաեւ յաղթանակներ ապահովողը ՀՄԸՄ-ն է ի վերջոյ:

«Օրհնեալ ըլլան կազմակերպիչ պատասխանատուները եւ գործակիցները, մարզիչներն ու մարզիկները: ՀՄԸՄ-ի դրօշը թող բարձր ծածանի բոլոր յաղթանակներուն վերեւ, եւ այս մրցումները թող նորագոյն նուաճումը ըլլան սերնդակերտումի ու հայրենասիրութեան խորացման ճամբուն վրայ»:

Իմաստալից պատգամներու փոխանցումէն ետք, տեղի ունեցաւ հինգ ամիսներու արդար պայքարի արդիւնքը նկատուող յաղթանակի բաժակներու յանձնումը:

Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեանի եւ մարզականի ներկայացուցիչ եղբ. Ժանօ Գահվէճեանի կողքին, ախոյեանութեան բաժակներու յանձնումին հրաւիրուած էին ծանօթ Փութպոլիստներ Յարութ Կարապետեան (LA Galaxy), Արթիւր Աղասեան



(Chivas USA), ինչպես նաև առաջին անգամ հայրենիքի մէջ կազմակերպուած համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն մասնակցած եւ առաւելագոյն կոչերը նշանակած Հ.Մ.Ը.Մ.ական տիպար մարզիկներ՝ Անի Գահվէճեան («Մասիս»), Զարեհ Աւետեան («Արարատ») եւ Վահրամ Հմայակեան («Շանթ»):

Յանձնուեցան մրցումներուն ընդգրկուած ճատրակի, թեթեւ ակտիվի, փինկ-փոնկի, վոլբոլի եւ պասքեթպոլի բաժանները: Դժբախտաբար, նոյն օրը կարելի չեղաւ յանձնել ֆուլթպոլի յաղթականներուն բաժանները: Վերջին քանի մը շաբաթավերջերուն տեղացած անձեւներուն պատճառով կարելի չէր եղած ամբողջացնել ֆուլթպոլի մրցումները:

Յայտնենք, թէ նախքան հանդիսութիւնը, Շրջանային Վարչութիւնը ՔԱՀԱՄ-ի մասնակցած իւրաքանչիւր վարժարանի յանձնեց յուշատախտակ մը, առ ի գնահատանք ՔԱՀԱՄ-ի 26րդ մարզախաղերուն մասնակցութեան եւ հայ աշակերտութեան առողջ միջավայր մը ստեղծելու կարեւոր գործին աջակցած ըլլալուն համար:

Հանդիսութիւնը վերջ գտաւ ժամը 6.30ին: Ներկաները գոհունակութեամբ, իսկ մրցող խումբերը յաղթական ոգիով մեկնեցան տուն, անգամ մը եւս շնորհակալ ըլլալով Հ.Մ.Ը.Մ.ին եւ իրենց վարժարաններուն, որոնք մարզական այս գեղեցիկ մրցումները յաղողութեան առաջնորդած էին:

Ստորեւ ՔԱՀԱՄ-ի պասքեթպոլի, վոլբոլի եւ փինկ-փոնկի ախոյեանութեան արդիւնքները:-

ՊԱՏԵԹՊՈԼ

Դ. ԴԱՍԱԿԱՐԳ

Մանչեր - 7րդ եւ 8րդ Դասարաններ (Upper)

1. Շամլեան Ազգ. վարժարան
2. Ալեք Փիլիպոս Ազգ. վարժարան
3. Հայ Քոյրերու եւ Ֆերահեան Ազգ. վարժարաններ

Մանչեր - 7րդ Դասարան (Lower)

1. Ֆերահեան Ազգ. վարժարան
2. Ալեք Փիլիպոս Ազգ. վարժարան
3. Թ.Մ.Մ. Արշակ Տիգրանեան վարժարան

Աղջիկներ - 7րդ եւ 8րդ Դասարան-

ներ

1. Սահակ Մեսրոպ վարժարան
2. Շամլեան Ազգ. վարժարան
3. Ֆերահեան եւ Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վարժարաններ

Ե. ԴԱՍԱԿԱՐԳ

Մանչեր - 5րդ եւ 6րդ Դասարաններ (Upper)

1. Հ.Բ.Ը.Մ.ի Մարի Մանուկեան-Տէմիրճեան վարժարան
2. Ալեք Փիլիպոս Ազգ. վարժարան
3. Շամլեան Ազգ. եւ Սահակ Մեսրոպ վարժարաններ

Մանչեր - 5րդ Դասարան (Lower)

1. Ալեք Փիլիպոս Ազգ. վարժարան
2. Շամլեան Ազգ. վարժարան
3. Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան եւ Հայ Քոյրերու վարժարաններ

Աղջիկներ - 5րդ եւ 6րդ Դասարաններ (Upper)

1. Շամլեան Ազգ. վարժարան
2. Հայ Քոյրերու վարժարան
3. Սահակ Մեսրոպ եւ Ալեք Փիլիպոս Ազգ. վարժարաններ

Աղջիկներ - 5րդ Դասարան (Lower)

1. Շամլեան Ազգ. վարժարան
2. Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վարժարան
3. Ֆերահեան Ազգ. եւ Յովսէփեան վարժարաններ

Զ. ԴԱՍԱԿԱՐԳ

Մանչեր - 3րդ եւ 4րդ Դասարաններ (Upper)

1. Շամլեան Ազգ. վարժարան
2. Հայ Քոյրերու վարժարան
3. Ֆերահեան (2) եւ Ալեք Փիլիպոս Ազգ. վարժարաններ

Մանչեր - 3րդ Դասարան (Lower)

1. Շամլեան Ազգ. վարժարան
2. Ֆերահեան (2) Ազգ. վարժարան
3. Ֆերահեան (1) Ազգ. եւ Սահակ Մեսրոպ վարժարաններ

Աղջիկներ - 3րդ եւ 4րդ Դասարաններ (Upper)

1. Ֆերահեան Ազգ. վարժարան
2. Շամլեան (2) վարժարան

3. Շամլեան (1) Ազգ. եւ Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վարժարաններ

Աղջիկներ - 3րդ Դասարան (Lower)

1. Հայ Քոյրերու, Շամլեան Ազգ. եւ Ֆերահեան Ազգ. վարժարաններ

Է. ԴԱՍԱԿԱՐԳ

Մանչեր - Ա. եւ Բ. Դասարաններ (Upper)

1. Մարգարաղերուն մասնակցած բոլոր վարժարանները

Մանչեր - Ա. Դասարան (Lower)

1. Շամլեան Ազգ. վարժարան
2. Ալեք Փիլիպոս վարժարան
3. Ֆերահեան (2) եւ Ալեք Փիլիպոս Ազգ. վարժարաններ

ՎՈՒԴՊՈԼ

Դ. ԴԱՍԱԿԱՐԳ ՄԱՆՉԵՐ

1. Ալեք Փիլիպոս Ազգ. վարժարան
2. Շամլեան (1) Ազգ. վարժարան
3. Շամլեան (2) Ազգ. եւ Մերտինեան վարժարաններ

Դ. ԴԱՍԱԿԱՐԳ ԱՂՋԻԿՆԵՐ

1. Ֆերահեան Ազգ. վարժարան
2. Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան (1) վարժարան
3. Շամլեան Ազգ. եւ Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան (2) վարժարաններ

Ե. ԴԱՍԱԿԱՐԳ ԱՂՋԻԿՆԵՐ

1. Մեսրոպեան Ազգ. վարժարան
2. Շամլեան Ազգ. վարժարան
3. Յովսէփեան եւ Ազգ. Ֆերահեան վարժարաններ

ՓԻՆԿ-ՓՈՆԿ

ՄԱՆՉԵՐ - ՏՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Յակոբ Քիրամիզեան - Արշակ Տիգրանեան վարժարան
2. Էրիք Մանուչերի - Հ.Բ.Ը.Մ.ի Մարի Մանուկեան-Տէմիրճեան վարժարան
3. Զէջըլ Մանուկեան - Սահակ Մեսրոպ եւ Մարք Մաթոսեան Հ.Բ.Ը.Մ.ի Մարի Մանուկեան-Տէմիրճեան վարժարաններ

ԱՂՋԻԿՆԵՐ - ՏՐԴ ԴԱՍԱՐԱՆ



- 1. Ալին Պապայեան - Շամլեան Ազգ. վարժարան
- 2. Ալինա Պաղտասարեան- Շամլեան Ազգ. վարժարան
- 3. Ալին Թաշճեան եւ Արիանա Զորպաճեան - Շամլեան Ազգ. վարժարան

ՄԱՆՁԵՐ - ԴՐԴ ԴԱՍԱՐԱՆ

- 1. Արամ Եսայեան - Շամլեան Ազգ. վարժարան
- 2. Խաչիկ Պողոսեան - Թ.Մ.Մ. Արշակ Տիգրանեան վարժարան
- 3. Ժիրայր Մանուկեան եւ Զաւէն Նալպանտեան - Թ.Մ.Մ. Արշակ Տիգրանեան վարժարան

ԱՂՋԻԿՆԵՐ - ԴՐԴ ԴԱՍԱՐԱՆ

- 1. Արինա Քիւրտեան - Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վարժարան
- 2. Դալար Գէորգեան - Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վարժարան
- 3. Քրիստին Տէլրմէնճեան եւ Անի Մուրատեան - Շամլեան Ազգ. վարժարան

ՄԱՆՁԵՐ - ՅՐԴ ԴԱՍԱՐԱՆ

- 1. Էրիք Դաւիթեան - Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վարժարան
- 2. Միշէլ Մալիսեան - Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վարժարան
- 3. Շանթ Օհանեան - Շամլեան Ազգ. վարժարան եւ Նարեկ Հալլաճեան - Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վարժարան

ԱՂՋԻԿՆԵՐ - ՅՐԴ ԵՎ ՅՐԴ ԴԱՍԱՐԱՆ

- 1. Արփինէ Գրիգորեան - Շամլեան Ազգ. վարժարան
- 2. Անի Մազմանեան - Շամլեան Ազգ. վարժարան
- 3. Միշէլ Կարապետեան եւ Փրէնի Եազոպի - Շամլեան Ազգ. վարժարան

ՄԱՆՁԵՐ - ՅՐԴ ԴԱՍԱՐԱՆ

- 1. Շանթ Մինասեան - Շամլեան Ազգ. վարժարան
- 2. Կրէկորի Յարութիւնեան-Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վարժարան

- 3. Շանթ Համբարձեան եւ Հրայր Պողոսեան - Շամլեան Ազգ. վարժարան

ՄԱՆՁԵՐ - 4ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

- 1.- Արման Բժշկեան - Շամլեան Ազգ. վարժարան
- 2.- Ալեք Քուրոյեան - Թ.Մ.Մ. Արշակ Տիգրանեան վարժարան
- 3.- Արման Ամիրխանեան - Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վարժարան եւ Արմէն Տալեան - Թ.Մ.Մ. Արշակ Տիգրանեան վարժարան

ԱՂՋԻԿՆԵՐ - 4ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

- 1. Լիանա Զրախչեան - Շամլեան Ազգ. վարժարան
- 2. Սոֆիա Գուչեան - Շամլեան Ազգ. վարժարան
- 3. Թանիա Պուլիքեանս եւ Թալին Պուլիքեանս-Շամլեան Ազգ. վարժարան:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL

★ ★ ★

PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms and 6 suites with individual heating/air conditioning, direct access telephone line, internet connection, minibar, safety box and satellite TV. Private bathroom with hairdryer.
The suites can accommodate 3 adults or a family with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38
infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

ԴԷՊԻ ՄՈՆԹԵՊԷԼԿՈՅԻ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՅՈՒՇԱՐՁԱՆ ՔԱՅԼԱՐՇԱԲ

Գեորգ Պետրիկեան ՓԱՍՍՏԻՆԱ

Իր հիմնադրութենէն ի վեր, Հ.Մ.Ը.Մ.ի Փաստինայի «Ազատամարտ» մասնաճիւղը ամէն տարի, Ապրիլ 24ի նախօրեակին, քայլարշաւով մը յարգանքի իր տուրքը կը մատուցէ Մեծ Եղեռնի մեր մէկուկէս միլիոն նահատակներու յիշատակին: Զեռնարկին մասնակից բոլոր հայորդիները, սկսուտ կամ արեւոյշ, պատանի կամ երիտասարդ, միութեան անդամ կամ ծնողք, լաւատեղեակ ըլլալով Ապրիլեան Եղեռնի նահատակները յարգելու կարեւորութեան, քայլարշաւին մասնակից դառնալով ո՛չ միայն սրբազան պարտականութիւն մը կը կատարեն, այլեւ՝ պատեհ առիթը նկատելով կը վերանորոգեն իրենց ուխտը Հայ Դատի պահանջատիրութեան նկատմամբ:

Այս տարի շարունակելով այս գեղեցիկ աւանդութիւնը, կազմակերպութեամբ մասնաճիւղի վարչութեան եւ խմբապետութեան, քայլարշաւը տեղի ունեցաւ մեծ շուքով, մասնակցութեամբ մասնաճիւղի սկսուտական կազմին, ինչպէս նաեւ՝ Օրէնճ Քառնթիի, Լոս Անճելըսի եւ Լա Քրեսենթա Հովիտի քոյր մասնաճիւղերուն ու շրջանի Հ.Յ.Դ.ի ու պատանեկանի շուրջ 150 անդամներուն:

Այսպէս, վերածնունդի գաղափարն ու նահատակներուն երթը շարունակելու կարեւորութիւնը իրենց մտքին մէջ հաստատօրէն պահած, Հ.Մ.Ը.Մ.ական քոյր-եղբայրները, վարչական կամ տարազաւոր, մեծ կամ փոքր, իրենց կազմակերպուած շարքերով, Փաստինայի Հայ Կեդրոնէն մինչեւ Մոնթեպելլոյի Նահատակաց յուշարձանը, շուրջ 18 քլմ. քալեցին:



Ամէն տարուան նման, վարչութիւնը այս տարի եւս մասնակիցներուն բաժնած էր այս առիթով պատրաստուած յատուկ թիւշորթներ:

Հպարտալի երեւոյթ էր, որ իւրաքանչիւր մասնակից, երկար երթին ընթացքին, իր սրտին ու մտքին մէջ հայօրէն ապրելու կամքը կը ցուցաբերէր, առանց յոգնելու կամ տրտնջալու կը շարունակէր իր ճամբան, իբրեւ սրբազան պարտականութիւն՝ հանդէպ իր ազգի նահատակներուն, իր կրօնքին եւ հայրենիքին:

Այսպէս, Հ.Մ.Ը.Մ.ական սկսուտներն ու իրենց ընկերացողները, գիշերը ուշ ատեն յուշարձան հասնելով, մէկական մոմեր վառած՝ բոլորուեցան անոր չորս կողմը, միաժամանակ ներկայ ժողովուրդին բաժնելով մոմեր, զանոնք

եւս մասնակից դարձուցին օրուան խորհուրդին:

Նահատակաց յուշարձան-մատրան առջեւ հաւաքուած, իրենց համար այդ մոմերը ուրիշ բան չէին կրնար ըլլար, եթէ ոչ մեր նահատակներու հոգիները լուսաւորող գեղեցիկ ջահեր: Անմիջապէս ետք, իբրեւ յարգանքի տուրք Ապրիլեան Եղեռնի նահատակներու յիշատակին, ներկայ հոգեւորականներուն կողմէ տեղի ունեցաւ յատուկ աղօթք, որմէ ետք մասնակից սկսուտներն ու պատանիները իրենց ծնողներուն հետ մեկնեցան, իրենց մտքին մէջ անգամ մը եւս արմատացնելով, թէ 95 տարիներ առաջ գործուած է համամարդկային տարողութեամբ ոճիր մը, որ տակաւին իր արդար հատուցումը չէ ստացած:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ...
Շարունակուած 9րդ էջէն

Ապա, կաթողիկոսարանի վեհարանին մէջ անոնք հանդիպում մը ունեցան Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին հետ: Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան Վեհափառ Հօր ներկայացուց մասնակից շրջաններու պատուիրակութիւնները եւ խորհրդաժողովին արձարձուած ընդհանուր տրամադրութիւնները:

Իր կարգին, Արամ Ա. Կաթողիկոս արտասանեց զօտեպնդիչ խօսք մը՝ դրուատելով Հ.Մ.Ը.Մ.ի սերնդակերտ ու հայակերտ դերը մեր կեանքին մէջ (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 3)



Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻՋ-ԴԻՒԱՆԱԿԱՆ ԵՒ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԼԱԲԱԼԻ ՄԷՋ



օրհնեց եւ ժողովականներու միացեալ աշխատանքին յաջողութիւն մաղթեց Լաւալի հոգեւոր հովիւ Հրայր Քհնյ. Նիկողեան: Այնուհետեւ, ներկաները բարի գալուստի խօսքերով ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մոսիկ Թոփուզեան, որ իր գոհունակութիւնը յայտնեց արդէն իսկ գեղեցիկ աւանդութիւն դարձած միջ-դիւանական եւ սկառտ դեկավարներու այս հանդիպումին համար եւ վստահեցուց, թէ նման աշխատանքներ մեծապէս կը նպաստեն երեք շրջաններու աշխատանքներու ծանօթացման եւ համագործակցութեան:

Մարտ Քէշիչեան ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

Հ.Մ.Ը.Մ.ի Հիւսիսային Ամերիկայի երեք շրջաններու (Արեւելեան, Արեւմտեան Մ. Նահանգներ եւ Գանատա) միջ-դիւանական Դրդ եւ սկառտական պատասխանատուներու ճորգ ժողովները տեղի ունեցան Երբաթ, 25 Փետրուար 2010ին, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի շրջանի Լաւալի Հայ Կեդրոնէն ներս, հիւրընկալութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան:

Շահեկան այս հանդիպումին Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Շրջանային Վարչութեան մասնակցեցան Սթիւ Արթինեան (ատենապետ) եւ Մարտ Քէշիչեան, Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան՝ Պետիկ Տէր Վարդանեան (ատենապետ), Լեւոն Սահակեան, Թորոս Ոսպիկեան եւ Վարդան Աղամեան, իսկ Գանատայի Շրջանային Վարչութեան՝ Մոսիկ Թոփուզեան (ատենապետ), Սեդրակ Պուրսալեան, Րաֆֆի Աբանեան եւ Հայկ Յակոբեան:

Ժողովին ներկայ գտնուեցան նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Արմէն Կէտիկեան եւ Վահրամ Դանիէլեան:

Երեք շրջաններու հանդիպումը սկիզբ առաւ հիւրընկալ շրջանի առաջնորդ նախագահի հիւրասիրութեամբ: Սեղանները

Ապա, արտի խօսք փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմէն Կետիկեան: Ան շնորհաւորելէ ետք կազմակերպուած նախաձեռնութիւնը, յաջողութիւն մաղթեց անոր ընթացքին, խրախուսեց ժողովականները հզօրացնելու իրենց շրջանները եւ այդ իմաստով Կեդրոնական Վարչութեան անունով խոստացաւ օգտակար հանդիսանալ:

«Պէտք է արդիական միջոցներով մեր աշխատանքները կատարել, որպէսզի մեր երիտասարդութիւնը կապուած պահենք Հ.Մ.Ը.Մ.ին», ըսաւ եղբ. Կէտիկեան:

Ժամը 10ին, առանձնաբար իրենց ժողովները գումարեցին երեք շրջաններու դիւաններն ու սկառտ ներկայացուցիչները: Ժողովի դիւանի եւ նախորդ միջ-դիւանական ժողովի ատենագրութեան ընթերցումէն ետք, տեղի ունեցան շրջաններու ընդհանուր գործունէութեան ամփոփ գեկուցումներու ներկայացումներ, որոնց մասին եղան լուսաբանական հարցումներ:

Այնուհետեւ, ամբողջ յետմիջօրէին, զոյգ ժողովներու մասնակիցները զբաղեցան երեք շրջաններու հզօրացման նպատակով ծրագրերով եւ զանոնք միասնաբար իրականացրելու կարելիութիւններու քննարկումով: Յատուկ շեշտ դրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի անդամակցութեան մեծամասնութիւնը կազմող մարզական թեւի ազգային դաստիարակութեան եւ մարզական միացեալ աշխատանքներու կազմակերպման, փոխադարձ այցելութեանց եւ համացանցի միջոցով հարորդակցելու կարեւորութեան:

Բնական է, այս բոլորին իրականացման համար կարելու է առողջ դեկավարներու պատրաստութիւնը, որուն անհրաժեշտութիւնը հրամայական դարձած է բոլոր շրջաններէն ներս:

Ժողովականները մեծապէս գնահատեցին Կեդրոնական Վարչութեան Հայաստանի մէջ կազմակերպած համա-Հ.Մ.-Ը.Մ.ական ծրագրի մարզախաղերը, որոնք ազգասիրութիւն սերմանեցին եւ մեծ ոգեւորութիւն ստեղծեցին Հ.Մ.-Ը.Մ.ի շրջաններուն միջեւ:

Ժողովին մասնակից երեք շրջաններու շարքերու առաւել աշխուժացման համար ժողովականները թելադրեցին լուրջ կեդրոնացում ցուցաբերել շրջաններու դաստիարակչական եւ կազմակերպչական աշխատանքներուն: Շեշտուեցան սկստական Վկայեալ եւ Արարատեան կարգերու կարեւորութիւնը եւ անոնց որդեգրումը շրջաններէն ներս: Անհրաժեշտ նկատուեցաւ շրջաններու գործունէութիւնը եւ մասնաւոր Հ.Մ.-Ը.Մ.ին առնչուող գիտելիքները համացանցի միջոցով տրամադրելի դարձնելու քայլը:

Հ.Մ.-Ը.Մ.ի երեք շրջաններու Շրջանային Վարչութիւններու դիւաններու ժողովին առընթեր տեղի ունեցող երեք շրջաններու սկստական դեկավարներու միօրեայ հանդիպումը վարեց հիւրընկալ շրջանի Շրջանային Խորհուրդի ատենապետ եղբ. Գառնիկ Նազարէթեան: Ժողովին Արեւելեան Մ. Նահանգներու շրջանէն մասնակցեցան Շրջանային Սկստա-Խորհուրդի ատենապետ Զարեհ Գարակիւլեան եւ Շրջանային խմբապետ Արա Գայսէրեան, Գանատայի շրջանէն Շրջանային Սկստա-Խորհուրդի ատենապետ Գառնիկ Նազարէթեան,

Սօսի Թաշճեան, Յովսէփ Արապեան, Արմէն Հացագործեան եւ Հ.Մ.-Ը.Մ.ի Մոնթրէալի մասնաճիւղի խմբապետուհի Ռուբինա Էքմէքճեան, իսկ Հ.Մ.-Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային խմբապետուհի Թալին Հինտոյեան հեռախորհրդակցական (teleconference) միջոցով հետեւեցաւ ժողովին: Այս հանդիպումին եւս շեշտուեցաւ համագործակցութեան, միացեալ աշխատանքներու եւ սկստական գիտելիքներու փոխանակման կարեւորութիւնը: Յատուկ շեշտ դրուեցաւ հայրենիքի մէջ կազմակերպուած համա-Հ.Մ.-Ը.Մ.ական յաջորդ բանակումին լաւապէս եւ առաւելագոյն թիւով մասնակցելու կարեւորութեան վրայ: Եղան նաեւ միացեալ աշխատանքներու ծրագրումներ:

Զոյգ ժողովներու մասնակիցները շեշտեցին նման հանդիպումներու կազմակերպման, շրջաններու փորձառութիւններէն օգտուելու եւ աշխատանքներու այժմէականացման կարեւորութիւնը:

Հ.Մ.-Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու շրջանը յանձն առաւ հիւրընկալել միջ-դիւանական յառաջիկայ ժողովը:

Ժողովին վերջին բաժինով, հիւրընկալ շրջանի կողմէ Մոսկի Թոփուզեան շնորհակալութիւն յայտնեց ժողովականներուն, որոնք իրենց մասնակցութեամբ եւ գործնական առաջարկներով մեծապէս նպաստեցին հանդիպումին յաջողութեան: Հանդիպումը վերջ գտաւ երեկոյեան ժամը 7.40ին, որմէ ետք ժողովականները մասնակցեցան ի պատիւ իրենց կազմակերպուած խրախճանքին, որ հաճոյալի ժամանցէ անկախ գեղեցիկ առիթ մը հանդիսացաւ աւելի մօտէն ծանօթանալու իրարու:

with the complements of

Restaurant Al-Mayass



Հ.Մ.Ը.Մ.Ի ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Ձարեհ Տերվիշեան ԹՈՐՈՆԹՈ

ՀՄԸՄ-ի Թորոնթոյի մասնաճիւղի մարզական խորհուրդը վերջին հինգ տարիներուն յատուկ հոգածութեամբ սկսաւ զարկ տալ աղջկանց ֆուտպոլի մարզախաղին, ստեղծելով ամէն տեսակի պայմաններ եւ դիւրութիւններ՝ խումբի յաջողութեան համար:

Աղջկանց ֆուտպոլի խումբի տարիներու մարզիչ եղբ. Վահան Չալիքեանի հետ մեր հանդիպումին ընթացքին, եղբ. Վահան խանդավառութեամբ տեղեկացուց խումբին այս տարեշրջանին ձեռք ձգած յաջողութիւններուն մասին:

Արդարեւ, հինգ տարիներու փորձառական շրջանէ մը ետք, շնորհիւ մարզի-

չին ցուցաբերած հոգածութեան, պարտաճանաչութեան եւ ի մասնաւորի մարզիկներուն փորձերուն ընթացքին ցուցաբերած լրջութեան եւ հետեւողական ներկայութեան, խումբը այս տարի զգալիօրէն բարելաւած է իր խաղին ոճն ու մակարդակը:

ՀՄԸՄ-ի Թորոնթոյի մասնաճիւղի աղջկանց ֆուտպոլի խումբը այս տարի իր մասնակցութիւնը բերած է Թորոնթոյի Սկարպորո շրջանի 2009-2010 տարեշրջանի աղջկանց լիկի երրորդ բաժանմունքի ներքին ֆուտպոլի մրցումներուն:

Լիկի մրցումներուն իրենց մասնակցութիւնը բերած են ինը խումբեր, որոնք Հոկտեմբեր 2009էն մինչեւ Ապրիլ 2010 իրարու դէմ մրցելով ունեցած են 21 խաղեր: ՀՄԸՄ-ի Թորոնթոյի խումբը



արձանագրած է 12 յաղթանակ, 2 հաւասարութիւն եւ 7 պարտութիւն: Նշանակած է 71 կոլ եւ ստացած է 40 կոլ, դրաւելով լիկի պատուաբեր երրորդ դիրքը:

Յատուկ յիշատակութեան արժանի են խումբին մարզիկներէն քոյր Գարին Մերմէր, որ լիկի մրցումներուն հանդիսացած է ամէնէն շատ կոլ նշանակող մարզիկը եւ քոյր Անի Տապապաղեան, որ հանդիսացած է երկրորդ:

Իրենց գեղեցիկ խաղարկութեամբ յատուկ գնահատանքի արժանացած են նաեւ յետսապահ քոյր Անի Յովհաննէսեան եւ բերդապահ քոյր Բալիկ Պաղտասարեան:

Հ.Մ.Ը.Մ. «ԿԱՄՔ»Ի ՖՈՒԹՊՈՒԻ ԵՐԷՑ ՏՂՈՑ ԽՈՒՄԲԸ «ԳՈՆԳՈՐՏԻԱ ԼԻԿ»Ի ԱԽՈՅԵԱՆ

Ձ. Տ. ՄՈՆԹԵՒԼ

ՀՄԸՄ- «Կամք»ի Մոնթրէալի մասնաճիւղի ֆուտպոլի երէց տղոց ներկայացուցչական խումբը «Գոնգորտիա լիկ»ի փակ դաշտի 2009-2010ի ձմեռնային եղանակի ընդհանուր դասաւորման առաջին դիրքը գրաւելէ ետք, Կիրակի, 28 Մարտ 2010ին, բազմատասնեակ համակիրներու ներկայութեան, բաժակի ախոյեանութեան կիսաւարտական մրցումը կատարեց «Հէլլաս» խումբին դէմ: ՀՄԸՄ-ի մարզիկները փայլուն խաղարկութեամբ 8-3 արդիւնքով դիւրին յաղթանակ մը արձանագրեցին, ապահովելով իրենց մասնակցութիւնը բաժակի աւարտական մրցումին, որ տեղի ունեցաւ նոյն օրը երեկոյեան:

ՀՄԸՄ-ի ճակատումը «Մոնթրէալ սթաֆ-1» խումբին դէմ եղաւ աւելի բարձրորակ: Խումբին բերդապահն ու յետսապահները կատարեալ պաշարիւնութեամբ դիմադրեցին հակառակորդի սկզբնական յարձակումներուն, որոնցմէ ետք

միջնապահներն ու յառաջապահները աստիճանաբար վերագրտան իրենց ներդաշնակութիւնը ու վճռական ջանքերով եւ գեղեցիկ խաղարկութեամբ նշանակեցին 3 անպատասխան կոլեր, համակիրներու ծափահարութիւններու տեղատարափին տակ տիրանալով ախոյեանութեան բաժակին:

Յատկանշական է, որ «Գոնգորտիա լիկ»ի այս եղանակի առաւելագոյն կոլ նշանակողներէն տասէն չորսը ախոյեան խումբի մարզիկներն էին հետեւեալ շարքով:-

Առաջին- եղբ. Նազօ Մաղաքեան՝ 19 կոլ, 10 մրցումի ընթացքին:

Երկրորդ- եղբ. Յովիկ Քելլաճարեան՝ 16 կոլ, 11 մրցումի ընթացքին:

Երրորդ- եղբ. Քրիստ Տոլմաճեան՝ 10 կոլ, 6 մրցումի ընթացքին:

Ութերորդ- եղբ. Նարեկ Մալխասեան՝ 10 կոլ, 10 մրցումի ընթացքին:



Հ.Մ.Ը.Մ.ի Պոլորճ Համուտի մասնաճիղի ատենապետ եղբ. Հրայր Ֆերմանեան

PhotoRAFFI



Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քելիշեան

PhotoRAFFI



Աթլեթիզմի լիբանանեան ֆետերասիոնի նախագահ Էմիր Ապտալլա Շեհապ:

PhotoRAFFI

ԵՂԲԱՅՐ ՎԱՐՈՒԺԱՆ ԳԷՈՐԳԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒՒՐՈՒԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Թղթակից ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ, Կիրակի, 11 Ապրիլ 2010ի կէսօրուան ժամը 12ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ տեղի ունեցաւ յիշատակի հանդիսութիւն մը՝ նուիրուած Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ակնկէթի բազմամեայ երախտաւոր, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբայր Վարուժան Գէորգեանին յիշատակին, ներկայութեամբ հոգեւոր

հայրերու, պատկան մարմիններու ներկայացուցիչներու, եղբայր Գէորգեանի ընտանեկան պարագաներուն, Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ բարեկամներու:

Հանդիսութեան բացման խօսքը արտասանեց քոյր Սեդա Պէշլեան: Ան նշեց, որ եղբ. Վարուժան Գէորգեան եղած է ծառայասէր Հ.Մ.Ը.Մ.ական, հաւատարիմ կուսակցական, օրինակելի հայր եւ պարտաճանաչ ու աշխատասէր անձ: Ան հաստատեց, որ յիշատակի այս հանդիսութիւնը նուազագոյն նախաձեռնութիւնն է յիշելու համար Հ.Մ.Ը.Մ.ին ծառայութիւն մատուցած անձի մը վաստակը, ներդրումն ու յիշատակը:

Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի Պոլորճ Համուտի մասնաճիղի վարչութեան խօսքը արտասանեց ատենապետ Հրայր Ֆերմանեան: Ան ըսաւ, թէ Գէորգեան փոքր տարիքէն անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ին, որուն շարքերուն մէջ ի յայտ եկած են իր արթուն եւ ճկուն մարզիկի բնատուր յատկութիւնները: Եղբայր Վարուժան Գէորգեանի իրագործումներուն անդրադառնալով, Ֆերմանեան աւելցուց, որ Լիբանանի ակնկէթի միջոցով ֆետերասիոնին մէջ Գէորգեան ունեցած է մեծ ներդրում:

Եղբայր Ֆերմանեան ըսաւ, որ Գէորգեան իբրեւ անխախտ հաւատքով օժտուած Հ.Մ.Ը.Մ.ական, միշտ պատնէշի վրայ մնացած է՝ ձեռք տալով մասնաճիղի բոլոր նախաձեռնութիւններուն եւ իբրեւ օրինակ ծառայելով իր շուրջի երիտասարդ սերունդի անդամներու:



PhotoRAFFI



րուն: Խօսքը եզրափակելով՝ եղբայր Ֆերմանեան հաստատեց, որ Վարուժան Գէորգեանի Հ.Մ.Ը.Մ.ականի տիպարը վառ պիտի մնայ բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներու միտքերուն մէջ:

Լիբանանի աթլէթիզմի ֆետերասիոնին խօսքը արտասանեց ֆետերասիոնի նախագահ էմիր Ապտալլա Շեհապ: Ան ըսաւ, որ Գէորգեան ճշդապահ անձնաւորութիւն մըն էր, որ մնայուն կերպով կը պաշտպանէր աթլէթի մարզիկներուն իրաւունքները: Շեհապ աւելցուց, որ Գէորգեան եղած է տիպար հայր ու վըստահելի եղբայր:

Հանդիսութեան աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան խօսքը արտասանեց ատենապետ եղբայր Յակոբ Քէշիշեան: Ան հաստատեց, որ դէմքերն ու դէպքերը պատմութիւն կը կերտեն, ու այս առումով եղբայր Վարուժան Գէորգեան այդ անհատներէն մէկն է: Ան ըսաւ, որ



իբրեւ մարզիչ, յանձնախումբի անդամ, ֆետերասիոնի անդամ, Շրջանային Վարչութեան անդամ եւ ժողովական, եղբայր Գէորգեան վախճուն տարի ծառայեց իր միութեան՝ տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի վայել եւ անջնջելի վաստակ ձգելով իր ետին:

Յիշատակի հանդիսութեան զեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ.ականներ Գէորգ Մանուկեան (տուտուկ), Աբիկ Չորաքեան (դաշնակ) եւ Մեղեղի Պոտտագեան (ասմունք): Այս առիթով ցուցադրուեցաւ եղբայր Գէորգեանի գործունէութիւնը ներկայացնող տեսերիզ մը:

Հանդիսութիւնը փակուեցաւ Նորայր Եպս. Աշրգեանի «Պահպանիչ»ով եւ ապա՝ «Յառաջ նահատակ» քայլերգով:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒ

ՍԵՄԻՆԱՐ-ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇԱՐՔԻՆ ԱՌԱՋԻՆԸ՝

«Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԱՌՈՅՑՐ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԻ ՊԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ»

Թղթակից
ՊՈՒՐՑ ՀԱՍՈՒՏ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան կազմակերպական յանձնախումբին նախաձեռնութեամբ, Ուրբաթ, 26 Մարտի երեկոյեան ժամը 8.30ին, «Երեւանեան» կեդրոնի «Չաւարեան» սրահին մէջ տե-

ղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներու նուիրուած սեմինար-դասախօսութիւններու շարքին առաջինը, որուն մասնակցեցան մասնաճիւղերու եւ Շրջանային մարզական խումբերու անդամ մարզիկները:

Բացման խօսքը արտասանեց եւ մարզիկներուն բարի գալուստ մաղթեց Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Հայկ Թապաքեան: Ան ըսաւ, որ այս նախաձեռնութիւնը մաս կը կազմէ կազմակերպական յանձնախումբին 2010ի աշխատանքներուն: Ան ընդհանուր գիծերով ծանօթացուց յանձնախումբին ցարդ կատարած աշխատանքները եւ ապագայի ծրագիրները:

Ապա, խօսք առաւ կազմակերպական յանձնախումբի ատենապետ եղբ. Վահէ Նաճարեան: Ան նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը առողջ մարմնի կողքին կը նպատակադրէ նաեւ առողջ միտքով մարզիկներ պատրաստել: Ան յայտնեց, որ



կազմակերպուած սեմինար-դասախօսութեան ընդմէջէն պիտի ներկայացուին Հ.Մ.Ը.Մ-ի պատմութիւնը, կառուցը, նպատակը, աշխատեալաձեւը, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ-ականի իւրաքանչիւր թիւնները: Եղբայր Նաճարեան յայտնեց, որ սեմինարը պիտի ունենայ իր շարունակութիւնը եւ այսուհետեւ մարզիկները իրենց մասնակցութիւնը պիտի բերեն ազգային տարբեր նախաձեռնութիւններու:

Օրուան նիւթը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեան, որ նախ լուսարձակի տակ առաւ Հ.Մ.Ը.Մ-ի նման միութեան մը ստեղծման տուն տուող պատճառները, միութեան հիմնադիր անդամները, անոնց գործած ժամանակաշրջանն ու պայմանները՝ հաստատելով, որ անոնք հասան իրենց նպատակին, որովհետեւ հիմը դրին այնպիսի միութեան մը, որ մինչեւ այսօր առողջ միջավայրը կը հանդիսանայ բարոյականութեան տէր անձերու կազմաւորման՝ ֆիզիքական, իմացական եւ հոգեկան առումով:

Եղբայր Շիմշիրեան նշեց, որ Հ.Մ.Ը.Մ-ականը կ'ըլլայ միտքով արթուն, համագործակցող, հաւաքական աշխատանքին հաւատացող, հայրենասէր, իր ազգին ու դատին համար նըւիրող, բարոյականութեան տէր անձ, որ գիտէ լաւապէս իր անձին ու միութեան անունը բարձր պահել՝ իր վարքով,

կեցուածքով եւ աշխատանքով: Ան նաեւ կ'ըլլայ պահանջատէր իր ժողովուրդին արդար իրաւունքներուն նկատմամբ:

Շարունակելով, եղբայր Շիմշիրեան անդրադարձաւ այն պարտաւորութիւններուն, պարտականութիւններուն եւ իրաւասութիւններուն, զորս միութեանական մը կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ-ի կառուցին մաս կազմելով: Ան ներկայացուց նաեւ այն ակնկալութիւնները, զորս միութիւնը կ'ունենայ իր մարզիկներէն՝ հաստատելով, որ միութեան հաւատացող զանգուածը Հ.Մ.Ը.Մ-ական մարզիկներէն կ'ակնկալէ ըլլալ տիպար կեցուածքի տէր, օրինակելի, արդիւնքներ ապահովող, միութեան անունը միշտ բարձր ու անբիծ պահող: Ան դիտել տուաւ, որ յաղթանակ ապահովել կը նշանակէ նաեւ բարոյական յաղթանակով դուրս գալ դաշտէն՝ ամբազրելով միութեան յաղթանակը:

Եղբայր Շիմշիրեան այս առիթով ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի կառուցը, անոր գործելաձեւը, մարմիններու եւ ժողովներու յաջորդականութիւնը, իւրաքանչիւրին պարտականութիւնը, աշխատանքի դաշտը եւ այլն:

Աւարտին, եղբ. Շիմշիրեան յայտնեց, որ մարզիկները պէտք է մարմնակրթութեան մէջ նաեւ հպարտութիւն եւ վերելք տեսնեն, որպէսզի գոյատեւեն ու յառաջդիմեն:

ՈՂՋՈՒՆԵԼԻ ԵՐԵՒՈՅԹ

Հ.Մ.Ը.Մ-ի Աթէնքի մասնաճիւղը, շնորհիւ պատասխանատու եւ մարզիչ եղբայրներ Յակոբ Եթիմեանի եւ Պաղտիկ Գարապաճաբեանի մնայուն ջանքերուն,

կը ջանայ պահել ֆութպոլի փոքրերու եւ պատանիներու խումբեր, որոնք շրջանէ մը ի վեր կ'ունենան իրենց կանոնաւոր փորձերն ու մրցումները:

Հ.Մ.Ը.Մ-ի Աթէնքի փոքրերու խումբը: Ձախէն աջ, ոտքի՝ Մովսէս Գալէմբերեան, Սեւակ Գազարեան, Արմէն Չաքքալեան, ճոնի Տէր Գրիգորեան, Արթուր Երիծեան, Փանայոթիս Փափասոթիրու եւ Վահրամ Մանկոյեան:

Նստած՝ Անդրանիկ Նաճարեան, Էմիլ Ճանիկեան, Արա Մանկոյեան, Նարեկ Գազարեան, Իլիաս Ղազարեան, Նուէր Յովսէփեան եւ Տանի Քաչիկեան:





Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ՄԱՄՆԱԾԻՒԴԵՐՈՒ ՄԻՋ-ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Րաֆֆի Սիլահեան ՀԱԼԵՊ

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ, Կիրակի, 11 Ապրիլ 2010ին, Հալէպի «Արամ Մանուկեան» Ժողովրդային Տան մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ մասնաճիւղերու միջ-վարչական խորհրդաժողովը, որուն իրենց մասնակցութիւնը բերին Լաթաքիոյ, Դամասկոսի, Գամիշլիի, Քեսապի մասնաճիւղերու եւ Հալէպի մասնաճիւղի զոյգ վարչութիւններու ներկայացուցիչները, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Սկառու. Խորհուրդի դիւանի անդամներն ու խմբապետութիւնը:

Խորհրդաժողովը բացուեցաւ «Յաւաջ նահատակ» քայլերգով, որմէ ետք ներկաները մէկ վայրկեան յոտնկայալուծութեամբ յարգեցին յիշատակը միութեան շարքերէն յաւէտ հեռացած հին եւ նոր ննջեցեալներուն:

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային վարչութեան ատենապետ եղբ. Րաֆֆի Տէր Աբրահամեան իր բացման խօսքին մէջ բարի գալուստ մաղթեց բոլորին եւ ըսաւ, թէ խորհրդաժողովին գլխաւոր



նպատակն է վերաորակաւորել մասնաճիւղերու վարչական քոյրերն ու եղբայրները եւ թարմացնել անոնց վարչական գիտելիքները, ինչ որ պիտի օգնէ շատ աւելի ինքնավստահ եւ հեզասահ կատարելու իրենց վարչական պարտաւորութիւնները: Եղբայրը իր խօսքը փակեց ըսելով, թէ մենք կը հաւատանք որ նմանօրինակ խորհրդաժողովները իրենց դրական անդրադարձը պիտի ունենան մասնաճիւղերու աշխուժացման

եւ հեզասահ ընթացքին վրայ: Ապա, ներկաներու փոխադարձ ծանօթացումէն ետք, մասնաճիւղերը ամփոփ կերպով ներկայացուցին իրենց գործունէութեան տեղեկագիրները: Յաջորդեց Սուրիոյ Շրջանային Վարչութեան տեղեկագիրին ներկայացումը, զոր կատարեց քոյր Ալին Քիւրիւմլեան: Խորհրդաժողովի ընթացքին տեղի ունեցաւ դասախօսական շարք մը: Ներկայացուեցան հետեւեալ նիւթերը:-

- ♦ Պետական սկառուտական շարժում.- Եղբ. Հայկազ Ասատուրեան:
 - ♦ Ատենագրութիւն պահել.- Քոյր Մարիա Գաբրիէլեան:
 - ♦ Ժողովական օրէնքներ.- Եղբ. Պօղոս Պալէոգեան:
 - ♦ Հաշուապահական օրէնքներ.- Քոյր Արփի Օղիկեան:
- Խորհրդաժողովին ըն-



Թացքին արծարծուեցան սկառուտական եւ մարզական գանազան հարցեր, «Մարզիկ» ամսաթերթի վերաբերող նիւթեր, Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի մարզաւանի շինարարական աշխատանքները, միջ-մասնաճիւղային խաղերը եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական ընդհանուր բանակումը: Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեան գեկուցեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպած Միջին Արեւելքի վարչութիւններու միջ-դիւանական խորհրդաժողովին մասին, նշելով թէ նման խորհրդաժողովներ ունին իրենց դրական ներդրումը՝ ճանչնալու համար մեր դիմագրաւած դժուարութիւնները եւ յաղթահարելու համար գանոնք:

Շարունակելով, եղբ. Տէր Աբրահամեան անդրադարձաւ սովորութիւն դարձած միջ-մասնաճիւղային մարզախաղերուն, ըսելով թէ այս մարզախաղերը միշտ սերտ յարաբերութիւն եւ խանդավառութիւն ստեղծած են մասնաճիւղերու միջեւ, հետեւաբար անհրա-

ժեշտ է բոլոր մասնաճիւղերու մասնակցութիւնը այդ մարզախաղերուն: Եղբ. Տէր Աբրահամեան տեղեկութիւններ փոխանցեց նաեւ յառաջիկայ օրերուն կայանալիք միջ-մասնաճիւղային տողանցք-փառատօնին մասին, որ տեղի պիտի ունենայ Հալէպի Ռիայէթ էլ Շապապ մարզադաշտին վրայ:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Սկառուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեան, իբրեւ տողանցքի յանձնախումբի ատենապետ, ներկայացուց փառատօնին աշխատանքները, շեշտելով որ իւրաքանչիւր մասնաճիւղ պարտի իր կարելին ընել մասնակցելու համար անդամներու առաւելագոյն թիւով:

Խորհրդաժողովի օրակարգի նիւթ դարձաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպած համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ծրագրի բանակումը, որ տեղի պիտի ունենայ 31 Յուլիսին 8 Օգոստոս, Հայաստան, ուր Սուրիոյ շրջանը իր մասնակցութիւնը պիտի բերէ բոլոր մասնաճիւղերու անդամներով:

Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Արտաշէս Փայասեան ամփոփ տեղեկութիւններ փոխանցեց «Մարզիկ» ամսաթերթի ցրտումի եւ մարզաւանի շինարարական աշխատանքներուն շուրջ, ըսելով թէ մարզաւանի ներքնասրահի կառուցման աշխատանքները արդէն իսկ աւարտած են եւ տրամադրուած են Հալէպի գոյգ վարչութիւններուն: Ֆուտպոլի դաշտին շինութեան աշխատանքներուն մասին եղբ. Փայասեան ըսաւ, թէ մօտ օրէն ամբողջութեամբ կ'աւարտին դաշտին շինութեան աշխատանքները եւ դաշտը պատրաստ կ'ըլլայ ֆուտպոլի խումբերու փորձերը հիւրընկալելու:

Խորհրդաժողովի աւարտին, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեան շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն, որոնք իրենց շինիչ մասնակցութիւնը բերին ժողովին եւ սատար հանդիսացան անոր յաջողութեան:

Խորհրդաժողովը վերջ գտաւ «Յառաջ նահատակ» քայլերով:



Elegance Plus
Shoes, Bags, Fashion Accessories & Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon
Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556
Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812
E-mail: hratch@goldenmountains.com
hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.



«ՀԱՅ ՍԿՈՒՏԻ ՕՐ»ՈՒՄՆ ՆՈՒՐՈՒՄԾ ՎԿԱՅԱԿԱՆԱՑ ԲԱՇԽՈՒՄ ԵՒ ԱՍՏԻՃԱՆԱՏՈՒՉՈՒԹԻՒՆ



Թղթակից ՅԱԼԵՊ

Վերջերս, «Զաւարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ «Հայ Սկաուտի Օր»ուան նուիրուած Վկայեալ կարգի եւ փոխ խմբապետի աստիճանի տուչութեան հանդիսութիւն: Հանդիսութեան ներկայ էին Մաշտոց Քհնյ. Արապաթեան, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութիւնը, Շրջանային Սկաուտ. Խորհուրդը եւ խմբապետութիւնը, ինչպէս նաեւ՝ քոյր միութիւններու ներկայացուցիչներ եւ ծնողներ: Սուրբոյ եւ Հայաստանի գոյգ քայլերգներէն ետք, բացման խօսքերով հանդէս եկան արաբերէնով՝ քոյր Ֆլորա Փոստալեան, հայերէնով՝ եղբ. Սահակ Մատարեան: Խօսքերէն ետք կիրարկուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր, որ ընդգրկեց սկաուտական դաւանանքը բացատրող բացման պատկեր, խաղաքար, կարգապահական վարժութիւն, բուրգ, ասմունք եւ գաւեշտ:

Հանդիսութեան բեմավարը բեմ հրաւիրեց օրուան բանախօս՝ Սուրբոյ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեանը:

Բանախօսը իր խօսքին մէջ «Հայ Սկաուտի Օր»ուան խորհուրդին անդրադառնալով ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական Ա. համագումարը Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներու օր հռչակեց Վարդանանց տօնը: Եւ ահա, այսօր, համայն հայ սկաուտները, հայրենիքի մէջ թէ սփիւռս աշխարհի, սկաուտի օրուան ընդմէջէն կը յիշատակեն ու կ'ողբակոչեն Աւարայրի կենաց մահու ճակատամարտը»: Եղբ. Մանուկ Քէօզկէրեան արեւուշական շարժումի հիմնադրութեան 100ամեակին մասին եւս անդրադառնալով ըսաւ, որ այս տարուան «Սկաուտի Օր»ը մեզի համար կրկնակի նշանակութիւն եւ խորհուրդ ունի, որովհետեւ ան կը զուգարկի արեւուշական շարժումի հիմնադրութեան 100ամեակին եւ Հ.Մ.Ը.Մ.ի արեւուշական բաժնի հիմնադրութեան 90ամեակին: «Ուր որ հայը բոյն շինեց, Հ.Մ.Ը.Մ.ը հոն հասաւ իր մարզական եւ սկաուտական դիմագիծով, իր միջ-մասնաճիւղային տողանցքներով, իր համահ.Մ.Ը.Մ.ական եւ մասնաճիւղային բանակումներով, խարուկահանդէսներով, շքերթներով եւ փառատօններով: Հ.Մ.Ը.Մ. երիտասարդութեան ներարկեց ազգային պատկանելիութեան գիտակցութիւն, կոփեց զանոնք ու կուանեց հայօրէն բարձրանալու եւ բարձրացնելու

անոնց անխորտակ կամքը»: Եղբ. Քէօզկէրեան իր խօսքը եզրափակեց ըսելով. «Սկաուտի օրը մեզի համար պիտի ըլլայ ներշնչուելու եւ վերստին հաղորդուելու օր, որպէսզի բոլորս ձեռք-ձեռքի տալով բարձրացնենք Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական ջահը, հետապնդելով մարդակերտումի ու հայապահպանման սրբազան գործը»:

Բանախօսութեան յաջորդեց փոխ խմբապետի աստիճանի տուչութիւնը: 23 քոյր-եղբայրներ օժտուեցան փոխ խմբապետի աստիճանով: Յայտագրին վերջին կէտը դարձաւ Վկայեալ կարգի վկայականաց եւ պէճերու տուչութեան արարողութիւնը, զոր հովանաւորեցին Մաշտոց Քհնյ. Արապաթեան, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեան եւ Սուրբոյ Շրջանային խմբապետ եղբ. Աւետիս Տէրվիշեան: Վկայեալ կարգի տեսական եւ գործնական հանգրուանները յաջողութեամբ աւարտելէ ետք՝ կարգի պէճի ու վկայականի արժանացան եղբայրներ Արուշ Պէրպէրեան, Գէորգ Յակոբճեան, Բաֆֆի Սիւլահեան, Յարութ Չուրուքեան, քոյրեր Նայիրի Զաքոյեան եւ Սեւան Պազարճեան: Աւարտին, Մաշտոց Քհնյ. Արապաթեան, շնորհաւորելով աստիճանի եւ վկայական ստացող քոյրերն ու եղբայրները, ըսաւ թէ սկաուտական կարգերն ու աստիճանները կրկնակի պարտաւորութեան առջեւ կը դնեն զանոնք ստանձնողները, որպէսզի անոնք իրենց աշխատանքները տանին աւելի փորձառու կերպով, ջահակիրը դառնալով Հ.Մ.Ը.Մ.ին, հնազանդելով միութեան նշանաբանին «Բարձրացի՛ր բարձրացուր»ին»:

Տէր Հօր «Պահպանիչ»էն ետք, հանդիսութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՎԱԼԱՆՍԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԽՈՒՄԲԸ ՅԱԶՈՂՈՒԹԵՆԷ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի վալանսի ֆուլթպոլի խումբը վերջին տարիներուն փայլուն արդիւնքներ կ'արձանագրէ՝ իր շուրջ ստեղծելով մեծ հետաքրքրութիւն եւ վայելելով քաջալերանքը գաղութի համակիրներուն եւ տեղւոյն մարզասէրներուն:

Հ.Մ.Ը.Մ.ի վալանսի ֆուլթպոլի խումբը իր դասակարգին ախոյեանն է արդէն: Խումբը կը բաղկանայ միայն հայորդիներէ, որոնք հաւատարմօրէն կը հետեւին փորձերուն եւ կ'ունենան պատուաբեր արդիւնքներ:

Վալանսի հայ գաղութը քաջալեր կը հանդիսանայ իր սիրելի ֆուլթպոլի խումբին՝ լայն մասնակցութիւն բերելով տեղւոյն մասնաճիւղի վարչութեան կազմակերպած ձեռնարկներուն: Այս իմաստով, 11 Ապրիլ 2010ին, Պէյրութէն հրաւիրուեցան ժողովրդային երգիչ Արարատ Ահարոնեանը եւ իր նուագախումբը, որոնք խանդավառեցին մասնաճիւղին կազմակերպած ճաշկերոյթ-պարահանդէսը, բազմահարիւր վալանսահայերու ներկայութեան:

Փրանսահայ գաղութին մէջ Հ.Մ.Ը.Մ.ի վալանսի ֆուլթպոլի խումբը եզակի երեւոյթ մըն է, որ տարիներէ ի վեր կը շարունակէ իր գոյութիւնը պահպանելու ջանքերը եւ կ'արձանագրէ տեսական յաջողութիւններ:

ՄՐՏԻ ԽՕՍՔ՝ ՍԻՐԵԼԻ ԵՂԲ. ՎԱՐՈՒԺ ԳԷՈՐԳԵԱՆԻՆ

Գառնիկ Սկրտիչեան ՊՈՒՐՑ ՀԱՍՈՒՏ

Թ ոչ տուէք այս խօսքը եղբայր վարուժին հետ վերջին անգամ խօսելու առիթի վերածելու, նկատի առած որ մէկ տարիէ աւելի չեմ խօսած հետը, ո՛չ ալ կրցած եմ քանի մը տող գրել իր յիշատակին:

Միրելի՛ վարուժ,

Գիտեմ, թէ կը սպասէիր, որ խօսինք իրարու հետ: Խօսինք այն բոլոր հարցերուն մասին, գորս ամէն կիրակի առաւօտ կը խօսէինք առհասարակ, երբ կը վերլուծէինք շաբթուան պատահածները:

Պէտք է գիտնաս, որ բոլորս այստեղ ենք հիմա, ընտանիքդ, ես, Զաւէնը, Հայկը, Գէորգը, Ժապը, այն բոլորը, որոնց հետ դուն օրական կը խօսէիր, եւ եթէ չտեսնէիր, առօրեայէդ բան մը պակաս կ'ըլլար. անպայման կը հեռաձայնէիր եւ որպիսութիւն կը հարցնէիր:

Հոս են նաեւ Պուրճ Համուտի եղբայր-քոյրերդ, գայլիկէն մինչեւ երէց անդամ, Շրջանային եւ Կեդրոնական Վարչութիւններու եղբայրներդ, անցեալի թէ ներկայ, որոնք եկած են յիշատակդ յարգելու եւ գործդ արժեւորելու:

Գիտե՞ս ինչու:

Կ'ըսեն՝ անփոխարինելի մարդ չկայ այս միութեան կամ որեւէ կառույցի մէջ:

Ճի՛շդ է:

Բայց այսօր փոխարինող մարդ չկայ մեր իրականութեան մէջ. սկսած է պակսիլ գործին հաւատացող մարդը:

Դու կը տագնապէիր ամէն օր, եւ մենք կ'ուզէինք քու



Հ.Մ.Ը.Մ.ի 7րդ Ընդհանուր Ժողովին (1999), եղբայրներ՝ Վարուժ Գեորգեան, Գօգօ Պայեան, Միրայն Ճիմշորեան եւ Սարգիս Աճմեան:

տագնապներդ փարատել ըսելով որ՝ «Դուն ալ քիչ մը հասկցիր նոր սերունդը, քիչ մը խօսող, բայց չաշխատող մարդիկը»:

Հաւատայ, որ անկեղծ չէինք: Պարզապէս քեզ քիչ մը կը հանդարտեցնէինք:

Անոնց, որոնց մասին տեսակէտ տուած էիր, այդ բոլորը ճիշդ էին:

Բացակայութեանդ, օրէ օր աւելի կ'անդրադառնանք, որ չես սխալած:

Ես, որ կը հաւատամ յաւիտենական կեանքին, վստահ եմ, որ անոնք որոնք մեկնած են այս աշխարհէն, եւ դուն հանդիպեցար իրենց հիմա, կը կուռիս իրենց հետ՝ քու տեսակէտներդ պաշտպանելով, անշուշտ՝ ոչ մէկ բան քու անձիդ կապած, այլ՝ բոլորը սիրած ու պաշտած միութեանդ համար, Հ.Մ.Ը.Մ.ին համար:

Իսկ հոս՝ այն մարդոց համար, որոնց նիւշեր տուած էիր, բոլորը կը տեսնենք այնպէս ինչպէս կ'երեւին իրենց իսկական պատկերին մէջ:

Դուն ճիշդ ճանչցած էիր բոլորը՝ անկեղծը եւ շողոքորթը, սխալողը եւ պատահական միութենականը:

Ափսո՛ս, որ ես ալ քիչ մը ճանչցայ այդ մարդիկը:

Քեզ ճանչցայ 1980ին, միութենական գործիդ ընդմէջէն եւ ամբողջ 30 տարի նոյն վարուժը մնացիր, բարեսիրտ, քաջ, ընկերասէր վարուժը:

Մեր մտերմութիւնը դարձուց մեզ իսկական ընկերներ, եղբայրներ եւ այդ շարունակուեցաւ մինչեւ մահուանդ վերջին օրը, 2 ժամ առաջ: Բնաւ միտքէս ալ չանցնելով, որ յաջորդ օր պիտի չտեսնուինք այլեւս, եւ երկու ժամ ետք պիտի տեսնեմ անչնչացած մարմինդ, գրասենեակիդ մէջ:

Չհանդուրժեցիր վրայ խնդալը, չընդունեցիր որեւէ սխալ՝ անձնական թէ միութենական կեանքի մէջ եւ խայտառակեցիր այնպէս ինչպէս արժանի էին անոնք:

Երբ պէտք ունեցան քեզի, եկան եւ սպասեցին գրասենեակիդ դրան առջեւ, աստիճաններուն վրայ, իսկ երբ ունեցան իրենց տեղերը, հասան պաշտօններու, մոռցան ամէն ինչ եւ նոյնիսկ չբարեկեցին քեզ:

Դուն այդ բոլորը առիր լայն սրտով եւ



Եղբայր Վարուժ իրեն այնքան սիրելի Հ.Մ.Ը.Մ.ի ԼԵՎԱՍՊ՝ յանձնախումբին եւ գործակիցներուն հետ:

քու աշխատանքդ սովորական ձեռով տարիր ամէն Կիրակի, քու միւս «խենթ» եղբայրներուդ հետ, տղաքն ու աղջիկները հաւաքելով, տանելով դաշտ՝ փորձերուն, հետեւելով անոնց եւ պատուաբեր արդիւնքներով պահեցիր Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի աթլէթի խումբը:

Աշխատեցար աթլէթիզմի Լիբանանի Ֆետերասիոնին մէջ՝ միշտ հաւատարիմ գործակիցը դառնալով էմիր Ապտալա Շեհապին եւ իր խմբակին, Հ.Մ.Ը.Մ.ի անունը բարձր պահելով եւ Լիբանանը ներկայացնելով զանազան երկիրներու մէջ:

Եղար նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի եւ Լիբանանի Շրջանային Վարչութիւններու անդամ, ատենապետ, զանազան յանձնախումբերու մէջ գործեցիր եւ գործին մէջ խտրութիւն չդրիր մեծին եւ փոքրին միջեւ:

Երբ նեղացուցին քեզ, չկրցար ուրիշներու նման ձեռնածալ մնալ եւ դիտել, իսկ երբ գործի կանչուեցար քու այնքան պաշտած կուսակցութեանդ մէջ, ընդունեցիր եւ գործեցիր՝ տագնապելով, յոգնելով, բայց հայրական մօտեցումներով:

Բան մը, որուն վկաններն են շրջանիդ «Շուշի» կոմիտէութեան ընկերները եւ ամբողջ շրջանի ժողովուրդը:

Սիրելի Վարուժ, կարծեմ երկար տեւեց այսօրուան խօսակցութիւնս եւ՝ քու չսիրած ձեռովդ, գովասանքով խօսեցայ քու մասիդ, ներէ՛ ինձի, եթէ համեստութիւնդ վիրաւորեցի: Բայց կը խոստանամ, որ վերջին անգամն է որ կը խօսիմ:

Ինչպէս սկիզբը ըսի, կը հաւատամ, որպէս քրիստոնեայ մարդ, որ օր մը կը տեսնուինք:

Երթդ բարի, սիրելի ընկերս, եղբայրս Վարուժ: Դուն ապահով հանգչէ, որովհետեւ գիտեմ, որ ժողովուրդի մը պատմութիւնը կը կերտուի, այն մարդոցմով, որոնք անջնջելի հետքեր կը ձգեն իրենց յաջորդներուն վրայ:

Դուն կերտեցիր Հ.Մ.Ը.Մ.ական մարդու անջնջելի տիպարը, եւ Պուրճ Համուտի եղբայր-քոյրերդ եւ քեզ բոլոր ճանցողները պիտի քալեն այդ ճամբէն, նոյն թափով եւ նոյն կողմով:

ԵՂԲ. ԳՕԳՕ ՊԳՏԻԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Արմէն Քէօզկերեան ՅԱԼԷՊ

Հ.Մ.Ը.Մ.ական երախտաւոր դէմքերու տերեւաթափը կը շարունակուի Հայկալի մէջ: Վերջերս, շրջանը կորսնցուց արժանաւոր եղբայր մը եւս՝ եղբայր Գօգօ Պգտիկեանը: Եղբայր Գօգօ եղած է միութեան երէց սերունդի հաւատաւոր անդամներէն. աշխատած է անձայն եւ առանց տաղտուկի: Ան համեստ էր նկարագրիով եւ պարկեշտ էր իր աշխատանքով: Ո՞վ չէր ճանչնար եղբայր Գօգօն, հիմնադիրը Հ.Մ.Ը.Մ.ի Հայկալի շեփորախումբին, նախ իբրեւ նուա-

գող, ապա՝ ուսուցիչ ու ղեկավար, որ մինչեւ վերջին վայրկեան պատնէշի վրայ էր: Իր երկարամեայ ծառայութեան համար Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը օրին գինք պարգեւատրած էր «Ծառայութեան» շքանշանով:

Եղբայր Գօգօ Պգտիկեան Հ.Մ.Ը.Մ.ի մէջ իր անձնուէր ծառայութեան կողքին եղաւ հաւատաւոր, պարկեշտ եւ նուիրեալ դաշնակցական:

Եղբայր

Գօգօն ծնած է 1933ին: Ունի երկու մանչ եւ մէկ դուստր, որոնք այսօր կը շարունակեն ընթանալ իրենց հօր աւանդած Հ.Մ.Ը.Մ.ական ուղիով:

Եղբայր Գօգօ, յիշատակդ միշտ վառ պիտի մնայ բոլորիս սրտին մէջ: Հողը թեթեւ գայ վրադ, խոնկ ու մոմ քու անբիծ եւ անմոռանալի յիշատակիդ:

Եղբօր մահը պատահեցաւ Ուրբաթ, 26 Մարտ 2010ի երեկոյեան, իսկ թաղման արարողութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, 27 Մարտին, Հայկալի Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ մէջ:



ՏԻՊ ՈՒ ՏԱՌ

Քաղեց՝ Սալբի Լատոյեան ՊԷՅՐՈՒԹ

Ճամանակի զարգացման հետ մարդիկ անհրաժեշտ նկատած են գրաւոր արտայայտել իրենց խօսքը:

Առաջին ձեւը եղած է պատկերագրութիւնը, այսինքն՝ մարդիկ իրենց ըսելիքը արտայայտած են պատկերներով եւ նկարներով: Բայց պատկերներով չեն յաջողած իրենց միտքը ամբողջութեամբ արտայայտել՝ անոր համար ստեղծած են նշանները:

Գրելու ամէնէն կատարեալ ձեւը տառագրութիւնն է:

Տառը հնչիւնին գրային նշանն է: Տառերը պայմանական նշաններ են. անոր համար տարբեր լեզուներ նոյն հնչիւնին համար ունին տարբեր նշաններ, այսինքն՝ տառեր:

Հնչիւնային առաջինը գիրը ստեղծած են փիւնիկեցիները:


Հնչիւնային են արաբական, յունական, լատինական եւ հայկական գիրերը:

Մերոպ Մաշտոց հայոց գիրը, այսինքն այբուբենը ստեղծեց 404-406 թուականին:

Գիրերու գիւտը նպաստեց հայ ժողովուրդի գոյատեւման:

Հայ գիրը Մաշտոց ստեղծած է հանգրուան առ հանգրուան:

1. Հայաստանի տարբեր գաւառները այցելելով, Մաշտոց ուսումնասիրած է այդ շրջաններու բար-



բառներու հրնչիւններն ու արտայայտութիւնները եւ տառերը ստեղծած է այդ ընդհանուրին համապատասխան:

2. Կային ձախէն ալ, աջէն ձախ, վերէն վար գրութիւններ, բայց ամէնէն զարգացածը աջէն ձախն էր եւ Մաշտոց ընտրեց այդ ձեւը:

3. Կարգ մը այբուբեններու մէջ նոյն տառերեմն տարբեր ձեւով կ'արտասանուէր: Մաշտոց ընտրեց ամէն մէկ հնչիւնի մէկ գիր, այսինքն՝ մէկ

տառ:

4. Մաշտոց ընտրած է անշատական գրութիւն, ուր տառերը կը գրուին հատիկ-հատիկ:

5. Տառի ճիշդ արտասանութեան համար կարգ մը այբուբեններ ունին նշաններ, որոնք տառերու վրայ գրուելով կը փոխեն անոնց արտասանութիւնը: Մաշտոցի այբուբենին մէջ աւելորդ նշաններ չկան:

6. Մաշտոց տառեր յորինեց նաեւ ձայնաւորներու համար:

Տառերը յորինելէ ետք, Մաշտոց պէտք է գանոնք դասաւորէր եւ անուններ տար:

Օ եւ Ֆ տառերը աւելցուեցան 12րդ դարուն:





ՈՒՂՂԱԹԻՈՒ



Ուղղաթիռի գաղափարը գոյություն ունի հին ժամանակներից ի վեր: 4րդ դարուն չինացիները կը թռցնէին խաղալիքներ՝ ուրախացնելու համար փոքրիկները: Այս խաղալիքներէն անոնք կը ծախեն Եւրոպայի մէջ:

1486ին, իտալացի գիտնական Լէոնարտո Տալինչի կը գծէ մեքենայ մը, որ ունէր թռչող երկու թեւեր՝ ուղղաթիռի նման: 1877ին, իտալացի Անրիքօ Ֆորլանինի կը յաջողի 13 մեթր բարձրացնել փոքր ուղղաթիռ մը, որ կ'աշխատէր շոգիով:

Իսկ 1907ին կը շինուի մարդատար առաջին ուղղաթիռը: Զայն կը շինէ Ֆրանսացի օդաչու Փոլ Գորնիլ: 13 Նոյեմբեր 1907ին պատմութեան մէջ կը յիշուի առաջին ուղղաթիռը, որ երկինք կը բարձրանայ օդաչուով:

1907էն ետք բազմաթիւ ճարտարագէտներ կ'աշխատին զարգացնել ուղղաթիռներու ձեւերը եւ գործածութիւնը:

Ուղղաթիռները կը գործածուին հիւանդ փոխադրելու, կրակ մարելու, իսկ ամէնէն շատ՝ բանակներու կողմէ:

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐ ՀԷՆ

ԱՂԱԲՆԻՆ

Աղանին թռչուններու ընտանիքին կը պատկանի: Աղանինները կ'ապրին գրեթէ ամէն տեղ՝ քաղաքներու, գիւղերու եւ դաշտերու մէջ: Անոնք կ'ուտեն հատիկ եւ հացի աւելցուկներ: Միջին հաշուով 200-600 կրամ կը կշռեն, կ'ապրին 5-10 տարի եւ 1 օրուան մէջ կրնան թռչիլ 1000 քմ.:



Աղանինները կ'ապրին գոյգերով եւ միասին կը հոգան իրենց ձագուկները, որոնք չորս շաբաթ բոյնի մէջ ապրելէ ետք՝ կը թռչին: Հետաքրքրական է նշել, թէ աղանին թռչունի միակ տեսակն է, որ կաթ կ'ունենայ եւ իր ձագուկները կը դիէցնէ: Աղանինի ձագը կը կոչուի դոլս:

Անցեալին, աղանին նամակցելու միջոցներէն մէկն էր: Անոր ոտքին կը կապէին նամակ մը եւ զայն ապահով կը հասցնէր ճշգրտած տեղը: Շատ մը գիտնականներու ուսումնասիրութեան նիւթը դարձած է այս երեւոյթը, որուն բացատրութիւնը այն է թէ՝ աղանիններու ուղեղը կողմնացոյցի կը նմանի. անոնք կրնան իրենց բոյնը վերադառնալ նոյնիսկ իրենց աչքերը փակ վիճակով:

Աղանին կը հանդիպինք նաեւ Նոյեան տապանին մէջ, երբ ան ձիթեանի ճիւղ մը բերանը կը մտնէ տապանին մէջ եւ այդ օրուրնէ սկսեալ Նոյի օրհնութեամբ անոր վիզը կ'ըլլայ ծիածանի գոյներով:

Աղանին խորհրդանիշն է խաղաղութեան:



ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է: Կռնակս փայտ է, փորս՝ մազ: Առտունները կը վազեմ վրադ:

(Պատասխանը՝ յաջորդիւ: Նախորդ հանելուկին պատասխանն էր շաքանակ):



Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

ՍՈՏՈՒՔՈՒ

5			7		3			6
	8	3				1	9	
		9		1		7		
3			2		6			8
		4				5		
8			4		1			2
		7		8		6		
	3	8				2	5	
2			3		9			1

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկումով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը գետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիսնոց իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ գետեղուած են:

Նախորդին լուծումը

8	5	6	7	3	1	2	9	4
3	4	7	5	2	9	6	8	1
2	1	9	4	6	8	3	7	5
5	7	4	3	8	2	1	6	9
6	8	3	1	9	4	7	5	2
9	2	1	6	7	5	8	4	3
7	6	5	2	4	3	9	1	8
4	3	8	9	1	7	5	2	6
1	9	2	8	5	6	4	3	7

Պատասխանը՝ յաջորդիւ

ՀՈՐԻՁՈՆԱԿԱՆ

1. «ԵՈՒ. Է. ԷՓ. Ա.»ի այժմուս անուանումը:
2. Կրկնուած բաղաձայններ - Հայ երգիծազիր-Ժողով:
3. Թշուառ - Աղեկատ - Գինդ:
4. Ուրուական - Քաղցած:
5. Հայրենի ճատրակի վարպետ:
6. Պատկեր - Ածականակերտ մասնիկ - Հին ձեւով իգական «նա»:
7. Կրակ - Խարազան - Արգելական:
8. Կանացի պատուանուն - Լուացարանի անհրաժեշտ իր:
9. Երաժշտական ժամանակ - Ստացական ածական:
10. Աշխարհը իր ուսերուն շալկած՝ յոյն դից - Մոխիր:
11. Դրկից գիրեր - Պրազիցի Ֆուլթոլիստ - Սիամանթոյի ծննդավայրը:
12. Էական բայէն - Համար - Տհաս:
13. Թեւձակ - Յետոյ - «Գեղեցիկ» անուանուած հայ նահապետ:
14. Միակտուր - Հանդէս:
15. Թիւրակն - Ելեկտրականութեան միաւոր:
16. Դ. դարու հերետիկոս - Տեսողութեան կը նըպաստէ:
17. Խիզախ, քաջասիրտ - Զեփիւռ:
18. Բոսոր - Գրաբար՝ ո՞ւր - Փոխադրէ:
19. Թագաւորի բնակարան - Ռոմի Շնայտրրի Ֆիլմերէն:
20. Զիապիծակ - Կաշաուք - Իմացականութիւն:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Ռուս թենիսիւումըն - Իրերայաջորդ տաուեր:
2. Յոփ - Զանաց - Կրկնուած բաղաձայններ:
3. Խոփը արօրին միացնող փայտ - Նոյի որդիներէն - Ալբուբենէն:
4. Ծահիճ - Իսլամ կրօնաւոր - Արական օտար անուն - Ածականակերտ մասնիկ:
5. Կռնակի ոսկոր - Կշիռքի հին չափ մը - Հաճար:
6. Աչազուրկ - Առատօրէն բաշխուած - Շանի:
7. Աստուած - Էտիրնէ քաղաքին պատմական անունը - Կրկնուած բաղաձայններ:
8. Ստամոքսի խողովակ - Երկբարբառ մը - Յանկապատով չըջապատուած վայր:
9. Եւրոպական գետ - Ափրիկեան երկիր - Տեսանելիք - Տախտակի շերտ - Ծափօնական դասական թատրոն:
10. Իգական անուն - 1958ին լաւագոյն Ֆիլմի «Օսքար»ին արժանացած ժապաւէնը - Հոլովակերտ մասնիկ:
11. Արական օտար անուն - Հատալից:
12. Օղալին փոխադրամիջոց մը - Ստացական ածական:
13. Արական օտար անուն - Դե՛հ - Խթում, նաւակատիք:
14. Սրտուկ - Գերմանահայ արհեստարար կուփամարտիկ:
15. Յանկութեանէն կատողիլ - Սանդ - Վանէ՛:

1																			
2																			
3																			
4																			
5																			
6																			
7																			
8																			
9																			
10																			
11																			
12																			
13																			
14																			
15																			
16																			
17																			
18																			
19																			
20																			

ԴԱԽՏՈՒՄ ԳՐԱԴԱՐԱՆ 881 ԻԿ

1																				
2																				
3																				
4																				
5																				
6																				
7																				
8																				
9																				
10																				
11																				
12																				
13																				
14																				
15																				
16																				
17																				
18																				
19																				
20																				



Հ.Մ.Ը.Մ.Ի ՎԱՅԿՄԱՒ ՖԱՒՅՈՒՄԻ ԽՈՒՄԵՐԸ